ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Կրթություն..... 6

Գիտություն..... 21

Գիտաժողովներ.....35

Միջազգայնացում.....45

Համագործակցություն 52

Ռազմավարական պլանավորում և ԵՊՀ զարգացման ռազմավարական նոր ծրագրի մշակում..... 69

Թվային հարթակներ և ֆիզիկական միջավայր.....70

Հանրային հաղորդակցություն և ուսանողական կյանք..... 80

Սոցիալական պատասխանատվություն..... 85

Համալսարանականների ձեռքբերումներ 89

«ԵՊՀ բարեկամներ» հիմնադրամ..... 95

Վերջաբան 97

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի պետական համալսարանը, որպես Հայաստանի Հանրապետության մտավոր ինքնաբավության կարևորագույն կենտրոն, շարունակում է իր առաքելությունը՝ ներդրում ունենալու մեր պետության և հասարակության զարգացման գործում: Մեր առաջնահերթությունները հստակ են. շարունակաբար կատարելագործել կրթական ծրագրերը՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին և հասարակական պահանջներին, խթանել գիտական նորարարությունները և ամրապնդել գործընկերային կապերն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում:

Համալսարանում գիտելիքի փոխանցումն ու նոր գիտելիքի ստեղծումը դիտարկվում են որպես անհատին ու հասարակությանը փոխակերպող ուժ և զարգացման նոր հեռանկարներ ուրվագծող առանցքային միջոցներ: Համալսարանում կրթությունը ինքնաբացահայտման, ինքնակատարելագործման և առաջընթացի նախապայման է, որը պատասխանատվություն ստանձնելու հիմք ու հնարավորություն է ստեղծում:

Անցնող տարին ԵՊՀ-ի համար եղել է թե՛ մարտահրավերների, թե՛ նշանակալի ձեռքբերումների տարի: Այս ժամանակաշրջանում մենք կանգնած ենք եղել արտաքին և ներքին դժվարությունների առջև, սակայն կարողացել ենք արձագանքել դրանց՝ հավատարիմ մնալով համալսարանի արժեքներին ու նպատակներին:

2023 թվականին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած հումանիտար աղետը համախմբել է ԵՊՀ ամբողջ ռեսուրսները: Համալսարանը աջակցություն է ցուցաբերել արցախցի մեր հայրենակիցներին՝ կազմակերպելով նյութական, կրթական և հոգեբանական օժանդակություն: Մեր համալսարանական համայնքը միասնականությամբ և անձնվիրությամբ արձագանքել է այդ մարտահրավերին՝ վերածվելով համերաշխության և օգնության յուրօրինակ հենասյունի:

Թեև հաշվետու տարում արտաքին մարտահրավերները բազմաթիվ էին, և դրանց ազդեցությունը հասարակության և համալսարանի վրա չափազանց մեծ էր, ԵՊՀ-ն ամբողջ տարվա ընթացքում հետևել է պլանավորված գործողությունների ռազմավարությանը՝ բարելավելով կրթական ծրագրերը, խթանելով գիտական հետազոտությունները և ամրապնդելով միջազգային համագործակցությունը: Մենք

շարունակել ենք արդիականացնել մեր կրթական միջավայրը՝ համապատասխանեցնելով այն ժամանակակից պահանջներին և աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին:

Մեր ուսանողներն ու աշխատակիցները ներգրավված են կրթական ու գիտական այնպիսի գործընթացներում, որոնք նպաստում են իրենց ներուժի բացահայտմանը և կյանքի յուրաքանչյուր ոլորտում հաջողության հասնելուն:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ում առաջին անգամ նոր ձևաչափով ծավալուն և մասնակցային պլանավորման գործընթաց է իրականացվել՝ հնարավորություն տալով ոչ միայն ամփոփ կերպով դիտարկելու իրականացված գործողությունները, այլև կառուցելու համալսարանի ապագայի ամուր հիմքերը համալսարանական համայնքի ակտիվ ներգրավմամբ:

Այս մոտեցման շնորհիվ ԵՊՀ-ն կարողացել է իր գործունեության արդյունքները դարձնել ավելի չափելի և վերագնահատել առկա ռեսուրսներն ու հնարավորությունները:

Այս հաշվետվությունն ընդգծում է հաշվետու տարվա հիմնական ձեռքբերումները, արձանագրված հաջողությունները և հաղթահարված մարտահրավերները:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում 2021-2026 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի, ինչպես նաև տարեկան պլանավորման նպատակներից և խնդիրներից ելնելով՝ կատարվել են կրթական գործընթացների արդյունավետ կազմակերպմանը և բարելավմանը միտված բազմաթիվ աշխատանքներ: Մասնավորապես՝ բարելավվել կամ լրամշակվել են նոր կարգեր, իրականացվել են պիլոտային ծրագրեր, կազմակերպվել են հետազոտություններ, որոնք կրթական գործընթացի բարելավման, որոշումների կայացման և զարգացման ռազմավարական նոր ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել, լիցենզավորվել և իրականացվել են մի շարք կրթական ծրագրեր, մշակվել են մագիստրոսական կրթական ծրագրերի գործունեության առանցքային ցուցանիշները, և դրանց գնահատման հիման վրա զարգացման դրամաշնորհային ծրագրերով խրախուսվել են առավել արդյունավետ գործող ծրագրեր: Կատարվել են միջազգայնացմանը միտված մի շարք ծրագրեր ու աշխատանքներ:

2023-2024 ուստարում ԵՊՀ դիմորդների թիվը բակալավրիատի առկա ուսուցման համակարգում կազմել է 3189, իսկ ընդունվածների թիվը՝ 2390 (անվճար՝ 493, վճարովի՝ 1897), այսինքն՝ մրցույթը հաղթահարել են դիմորդների 75 %-ը: Կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում դիմորդների

թիվը կազմել է 24 %, ընդունվածներինը՝ 28 %: 2023-2024 ուստարում հեռակա ուսուցման համակարգում դիմորդների թիվը բակալավրիատում կազմել է 561, որից ընդունվել է 350-ը, այսինքն՝ 62 %-ը: Մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգում դիմորդների թիվը կազմել է 1014, ընդունվածներինը՝ 852, մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգում դիմորդների թիվը կազմել է 143, ընդունվածների թիվը՝ 116:

2023-2024 ուստարում ԵՊՀ սովորողների թիվը եղել է 12980, որոնցից 11154-ը՝ բակալավրիատում (այդ թվում՝ 2142-ը հեռակա ուսուցմամբ), 1459-ը՝ մագիստրատուրայում (այդ թվում՝ 194-ը հեռակա ուսուցմամբ) և 367-ը՝ ասպիրանտուրայում (այդ թվում՝ 228-ը հեռակա ուսուցմամբ):

2023-2024 ուստարում համալսարանն առկա ուսուցմամբ ավարտել է 2734 ուսանող, որից 2048-ը բակալավրի կրթական ծրագրով (417-ը՝ գերազանցության դիպլոմով), 686-ը՝ մագիստրոսի (349-ը՝ գերազանցության դիպլոմով), իսկ հեռակա ուսուցմամբ ավարտել է 551 ուսանող, որից 403-ը բակալավրի կրթական ծրագրով (9-ը՝ գերազանցության դիպլոմով), 148-ը՝ մագիստրոսի (52-ը՝ գերազանցության դիպլոմով):

Նույն ժամանակահատվածում առկա ուսուցմամբ անվճար հիմունքով ԵՊՀ ասպիրանտուրա է ընդունվել 40, վճարովի հիմունքով՝ 3 ասպիրանտ: Հեռակա ուսուցմամբ անվճար հիմունքով ընդունվել է 6 ասպիրանտ: ԵՊՀ-ում հայցորդ են ձևակերպվել 44 դիմորդներ, որոնցից 26-ը՝ աշնանային, 18-ը՝ գարնանային կիսամյակում:

Հաշվետու տարում ԵՊՀ նախապատրաստական դասընթացների բաժնում ձևավորվել է 18 առարկայական խումբ, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներից ձևավորված խմբերը, որի արդյունքում ժամավճարային հիմունքներով ձևակերպվել է 11 դասախոս՝ հատկացնելով 2680 ժամ:

Բարձր ներուժ ունեցող դիմորդների ներգրավման գործում մեծ կարևորություն ունի հանրակրթական առարկաներից աշակերտական օլիմպիադայի կազմակերպումը: Հաշվետու տարում հանրակրթական առարկաների գծով կազմակերպվել է ԵՊՀ աշակերտական օլիմպիադա 2024-ը, որի I փուլին մասնակցել է ՀՀ ավագ դպրոցների 1245 աշակերտ: Նրանցից լավագույն արդյունքներ ցուցաբերած 428 աշակերտներ մասնակցել են II փուլին: Օլիմպիադայում հաղթած 40 աշակերտներ պարգևատրվել են I, II, III կարգի դիպլոմներով, ինչն աշակերտներին հնարավորություն է տալիս առաջին կուրսում ստանալու ուսման վարձի համապատասխանաբար 50, 40, 30 տոկոս զեղչ: Նրանցից 2-ն օգտվել են ուսման վարձի 50, 2-ը՝ 40 և 4-ը՝ 30 տոկոս զեղչից:

ԵՊՀ ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնը կազմակերպել է 39 այց ՀՀ դպրոցներ, որոնցում ակտիվորեն ներգրավվել են համալսարանի ֆակուլտետներն ու կառուցվածքային մյուս ստորաբաժանումները: Միջոցառումները մի կողմից միտված են ԵՊՀ-ի կողմից մատուցվող կրթական ծառայությունները, ԵՊՀ-ում կրթություն ստանալու շահեկանությունը ներկայացնելուն, բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու և շարունակական կրթության կարգերի պարզաբանմանը, մյուս կողմից՝ տարաբնույթ թեմաների շրջանակում աշակերտների ճանաչողական բացը լրացնելուն, դպրոց-ԵՊՀ կապն ամրապնդելուն:

ԵՊՀ առաքելության, նպատակների, ձեռքբերումների, ուսանողական կյանքի և ուսումնառության հետ կապված տարբեր իրողությունների մասին հնարավորինս ամբողջական պատկերացում ձևավորելու նպատակով հաշվետու տարում Երևանի և ՀՀ մարզերի դպրոցների 2325 աշակերտների համար (178 ուսուցչի մասնակցությամբ) կազմակերպվել է 628 նպատակային ճանաչողական այց ԵՊՀ (576 այց, 52 շրջայց): ԵՊՀ պաշտոնական կայքում լուսաբանվել են դիմորդների հետ տարվող աշխատանքները, պարզաբանումներ տրվել դրանց հետ կապված հարցերին, իսկ բակալավրիատի ընդունելության կարգի ու «Դիմորդի ուղեցույց 2024» ձեռնարկի, որը տպագրվել է 1000 օրինակով, և ԵՊՀ ֆակուլտետների բուկլետների, հասանելիությունն ապահովելու շնորհիվ խթանվել է շահառուների տեղեկատվական հետաքրքրությունների բավարարումը:

Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնն ակտիվ մասնակցություն է ունեցել ԵՊՀ-ի կողմից կազմակերպված «ԲանՈՒԳործ» էքսպո 2024-ին: Կենտրոնի կողմից ապահովվել է Երևանի և մարզերի դպրոցներից ավելի քան 3700 աշակերտների մասնակցությունը միջոցառմանը:

Հաշվետու ուսումնական տարում կրթական տարբեր աստիճանների կրթական գործընթացը բարելավելու համար մշակվել են 12 նոր կարգեր (կրթական 5, 6, 7, 8-րդ աստիճաններին վերաբերող), որոնց անհրաժեշտությունը բխում էր զարգացման ռազմավարական ծրագրի, ընթացիկ հետազոտությունների, ինչպես նաև իրականացվող ռեֆորմների տրամաբանությունից:

2023-24 ուսումնական տարում իրականացվել է 11 մագիստրոսական կրթական ծրագրերի վերալիցենզավորում (վերանայվել են կրթական ծրագրերի ուսման տևողությունները և բովանդակությունը), լիցենզավորվել են 6 նոր մագիստրոսական կրթական ծրագրեր՝ «Միջազգային դատարաններ և արբիտրաժ», «Հանրային քաղաքականության հետազոտություններ», «Հանրային քաղաքականություն և կառավարում», «Սոցիալական աշխատանք և սոցիալական քաղաքականություն», «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկա» և «Ռազմավարական հաղորդակցություն»:

Առաջին անգամ մշակվել են մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացման գործունեության առանցքային ցուցանիշներ, որոնց գնահատման արդյունքում ԵՊՀ-ում գործող մագիստրոսական 6 կրթական ծրագրեր հետագա զարգացման նպատակով մրցութային կարգով ստացել են լրացուցիչ ֆինանսավորում:

Բակալավրի 59 կրթական ծրագրերի համար մշակվել է մասնագրի և դասընթացների նկարագրիչների նոր ձևաչափ, վերանայվել և ՈԱՇ/ՈՈՇ-ին են համապատասխանեցվել այդ կրթական ծրագրերի կրթական վերջնարդյունքները (ԿՎ), ստուգվել և շտկվել են մասնագրերն ու դասընթացների նկարագրիչները: Կազմվել, ստուգվել և խմբագրվել են կրթական ծրագիր-ՈԱՇ/ՈՈՇ համապատասխանության մատրիցաները: Կազմակերպվել են բակալավրի 52 կրթական ծրագրերի մշտադիտարկման աշխատանքներ:



Հաշվետու տարում ԵՊՀ 4 կրթական ծրագիր առաջին անգամ ստացել է միջազգային հավատարմագրում: Իրականացված այս գործընթացի ժամանակ ներդրված մեծ ռեսուրսների ու արված աշխատանքի արդյունքում գերմանական «ASIIN» միջազգային գործակալությունը հավատարմագրել է Կենսաբանության ֆակուլտետի և Ֆարմացիայի ինստիտուտի «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» (բակալավրիատական), «Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա» (մագիստրոսական), «Ֆարմացիա» (բակալավրիատական) և «Ֆարմացիա» (մագիստրոսական) կրթական ծրագրերը:

Այս նշանակալի արդյունքը վերահաստատում է ԵՊՀ առաքելությունն ու հանձնառությունը՝ տրամադրել որակյալ կրթություն, որը համապատասխանում է

միջազգային չափանիշներին: Այն զարգացման նոր ուղենիշներ ու լայն հնարավորություններ է բացելու մեր առաջ՝ նպաստելով կրթության որակի շարունակական բարձրացմանն ու գիտական ներուժի առավել արդյունավետ կիրառմանը:

Միջազգային հավատարմագրումը բարձրացնելու է համալսարանի, կրթական ստորաբաժանումների ու ծրագրերի վարկանիշը՝ դրանք դարձնելով առավել գրավիչ ոչ միայն հայ, այլև օտարերկրյա դիմորդների համար: Այն ընդլայնելու է նաև շրջանավարտների՝ աշխատանքի անցնելու հնարավորությունները ինչպես հանրապետությունում, այնպես էլ արտասահմանում, խթանելու է ուսանողների և դասախոսների միջազգային շարժունությունը:

Շարունակելով հավատարմագրման գործընթացը՝ հաշվետու ժամանակահատվածում Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հետ համատեղ նախապատրաստվել է 6 կրթական ծրագրերի (3 բակալավրի և 3 մագիստրոսի) ինքնագնահատման զեկույց, որը համապատասխան հիմնավորումներով ու վկայություններով ներկայացվել է «ASIIN» գործակալությանը:

Հաշվետու տարում ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել է «ERASMUS+» ծրագրի նոր նախագիծ՝ «eCAMPUS»-ը, որը հաստատվել և ֆինանսավորվել է Եվրահանձնաժողովի կողմից: Նախագծի հիմնական նպատակն է ՀՀ բուհերում խթանել սոցիալապես հեռավար և ներառական համալսարանական կրթությունը: Բացի դրանից՝ կենտրոնը մասնակցել և ներգրավված է մեկ այլ՝ «ERASMUS+ PROVE» նախագծի աշխատանքներին, որի նպատակն է արժեքներին միտված կրթության խթանումը Հարավային Կովկասի բուհերում:

«ARMDOCT» ծրագրի շրջանակում մշակվել է «Արհեստական բանականություն և մեքենայական ուսուցում» դոկտորական ծրագիրը, որով նախատեսվում է ներդնել հիմնովին մշակված 6 նոր դասընթաց: «GEOTAK» միջբուհական համատեղ կրթական ծրագրի շրջանակում դոկտորական կրթության կենտրոնում գարնանային կիսամյակում ներդրվել են երկու դասընթացներ՝ «Տարածական վիճակագրություն» և «Գեոծրագրավորում (SQL)»:



2023-2024 տարեկան պլանավորման համաձայն՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում ուսումնառության որակի բարելավման նպատակով փորձնական եղանակով սահմանվել են կրթական մոդուլների նախապայմաններ: Պիլոտային ծրագրի կարևորությունը բխել է կրթական ծրագրի դասընթացների

շարունակականության սկզբունքի պահպանման անհրաժեշտությունից: Փորձնական ծրագիրը մեկ կիսամյակ հետո մշտադիտարկվել է, գնահատվել են հնարավոր թերի կողմերը և առավելությունները: Ծրագրի ներդրումը նախատեսված է ԲԿԳ օրենքը ուժի մեջ մտնելուց հետո:

Նախնական փուլում ԵՊՀ կրթական 2, իսկ այնուհետև 13 ստորաբաժանումներում փորձարկվել է «Պրոֆեսորի օգնականի» ինստիտուտի ներդրման գործընթացը: Փորձարկվել են երկու տարբեր մոդելներ Մաթեմատիկայի և մեխանիկայի ու Իրավագիտության ֆակուլտետներում: Երկրորդ փուլում առավել արդյունավետ մոդելը կանոնակարգվել է, մշակվել կարգ՝ ևս մեկ կիսամյակի ընթացքում արդեն թվով 13 կրթական ստորաբաժանումներով այն փորձարկելու համար: Փորձարկման ավարտին գործընթացն անցել է մշտադիտարկում: Անցնելով բարելավման ևս մեկ փուլ՝ այն արդյունավետորեն ներդրվել է:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են Ռազմավարական պլանավորմամբ նախատեսված պրակտիկային առնչվող բոլոր գործողությունները: Կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումներից նախապես ստացված հայտերի և ընդունող կողմերի հետ բանակցությունների արդյունքում կնքվել և գործող պայմանագրերին ավելացվել է 110 նոր պայմանագիր:

Շարունակվել և բարելավվել է նախորդ ուսումնական տարվանից սկսված բակալավրիատի ուսանողների՝ մասնագիտական պրակտիկայի արդյունքների ԵՊՀ ուսուցման կառավարման համակարգի (e-learning.ysu.am) մասնագիտական պրակտիկայի համար նախատեսված հատվածում մուտքագրման գործընթացը: Ուսանողները հարթակում հնարավորություն ունեն մուտքագրելու շաբաթական հաշվետվություններն ու ստանալու ղեկավարի կողմից համապատասխան գնահատական: Բացի դրանից՝ պրակտիկայի ավարտին կա հնարավորություն հարցման միջոցով կարծիք հայտնելու պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում մասնագիտական պրակտիկային մասնակցել է բակալավրիատի և մագիստրատուրայի (առկա և հեռակա) ավարտական կուրսերի 3227 ուսանող (բակալավրիատ՝ 2434, մագիստրատուրա՝ 793):

Մանկավարժի կրթական ծրագրով սովորող 493 ուսանողի համար կազմակերպվել է մանկավարժական պրակտիկա Երևանի և մարզերի հանրակրթական դպրոցներում:

2023-24 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում արտաքին ֆինանսավորմամբ 13 անվանական կրթաթոշակ է հատկացվել տարբեր ուսումնական ստորաբաժանումների 18 թեկնածուների, որոնցից 10-ը եղել են նոր թեկնածուներ՝ առաջադրված ուսումնական ստորաբաժանումների կողմից: Անվանական 4 նոր կրթաթոշակ է ավելացել Ժուռնալիստիկայի, Քիմիայի, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետներում և Ֆիզիկայի ինստիտուտում: Ներքին

ֆինանսավորմամբ 47 անվանական կրթաթոշակ է հատկացվել 50 ուսանողի, որից 34-ը դարձյալ նոր թեկնածուներ են եղել:

Երկրորդ կիսամյակում արտաքին ֆինանսավորմամբ 15 անվանական կրթաթոշակ է հատկացվել 21 ուսանողի, որից 6-ը՝ նոր առաջադրված թեկնածուների: Անվանական 3 նոր կրթաթոշակ է ավելացել Ֆարմացիայի ինստիտուտում: 2-րդ կիսամյակում ներքին ֆինանսավորմամբ 47 անվանական կրթաթոշակ է հատկացվել 50 ուսանողի, որից 12-ը՝ դարձյալ նոր թեկնածուների:

Ուշագրավ է, օրինակ, «Քեն Կակոսյան ընտանիք» կրթաթոշակային հիմնադրամի կողմից արդեն երկրորդ տարին տրամադրվող կրթաթոշակը, որը տրվում է Երևանի պետական, Հայաստանի ամերիկյան և Հայաստանի ազգային ագրարային համալսարանների մարզաբնակ ուսանողներին:

Կրթաթոշակի արժանացած ուսանողները ներկայացնում են իրենց ծրագրերը՝ նշելով, թե ինչպես են իրենց ուսումն ու հետազոտական նախագծերը նպաստելու համայնքային կյանքի բարելավմանը և զարգացմանը: Այս և նմանատիպ նախաձեռնությունները կարևոր ներդրում են ոչ միայն մեր ուսանողների անհատական աճի, այլև մեր երկրի ապագայի համար:



Հաշվետու ժամանակահատվածում միջմասնագիտական թեզի կատարման համար 4 կրթաթոշակ է տրամադրվել Ժուռնալիստիկայի, Սոցիոլոգիայի, Փիլիսոփայության և

հոգեբանության ու Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների ուսանողներին:

ԵՊՀ-ում ներքին դրամաշնորհների շրջանակում ուսումնական գործընթացում ներգրավված է եղել 15 հրավիրյալ պրոֆեսոր, որոնք դասավանդել են գործող կրթական ծրագրի առնվազն մեկ դասընթաց, ինչպես նաև ներառված են եղել կրթական ծրագրերի բարելավման աշխատանքներում:

ԵՊՀ-ն համագործակցություն է հաստատել աշխարհի գիտակրթական առաջատար կենտրոնի՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի («MIT») հետ՝ իրականացնելով բազմաբաղադրիչ ծրագրեր: Այս ընթացքում ԵՊՀ-ն տարբեր ժամանակաշրջաններում հյուրընկալել է «MIT» ուսանողների, որոնք դասավանդել են, անցել փորձաշրջաններ՝ իրենց գիտելիքն ու փորձառությունը փոխանցելով մեր համալսարանական համայնքին:

2023-2024 ուսումնական տարում ԵՊՀ-ն կազմակերպել է ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցմամբ (անվճար և վճարովի հիմունքներով) ասպիրանտուրայի ընդունելություն՝ համաձայն լիազոր մարմնի սահմանած ժամանակացույցի: Հայցորդներից մեկը ձևակերպվել է «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի, իսկ երկուսը՝ ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի հետ ԵՊՀ համագործակցության շրջանակում:

Հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել և վերամշակվել է հետազոտողի պատրաստման կրթական ծրագիրը, ներդրվել են ասպիրանտների և հայցորդների համար նախատեսված պարտադիր և ընտրովի դասընթացներ: ԱՄՆ-ից հրավիրյալ պրոֆեսորի ներգրավմամբ ներդրվել է նաև անգլիալեզու ընտրովի դասընթաց:

Իրականացվել են ընթացիկ տեղեկատվական աշխատանքներ կամ միջոցառումներ, որոնց շրջանակում ներկայացվել են ասպիրանտների և հայցորդների ուսումնառության հետ կապված մանրամասներ:

2023-2024 ուստարում ԵՊՀ ակադեմիական գրագրության կենտրոնը ակտիվորեն շարունակել է նախորդ ուսումնական տարում մեկնարկած իր գործունեությունը՝ ընդլայնելով իրականացվող աշխատանքներն ու դրանց շրջանակը: Մասնավորապես, ներդրվել է խորհրդատուի ինստիտուտը, որը ասպիրանտներին և հայցորդներին հնարավորություն է ընձեռում գիտական հետազոտությունների իրականացման կամ ատենախոսության պատրաստման ընթացքում ստանալու լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություն ինչպես հետազոտության բովանդակության, այնպես էլ արդյունքների հրատարակման հնարավորությունների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են ակադեմիական գրագրությանը վերաբերող ինը դասախոսություններ կամ սեմինարներ, որոնցից 3-ը վարել են օտարազգի հրավիրյալ պրոֆեսորներ Գերմանիայից, Ավստրիայից և Պորտուգալիայից: Ներդրվել է 3-շաբաթյա գործնական դասընթաց, որը վարել է Սեուլի ազգային համալսարանից ժամանած հրավիրյալ պրոֆեսորը:

«Registrar» համակարգի միջոցով ավելի դյուրին է դարձել գնահատման համակարգի կիրառումն ու վերահսկումը, որի համար հաշվետու տարում շրջանառության մեջ է

դրվել «Ռեգիստրար (registrar)» համակարգում դասընթացի բաղադրիչների առավելագույն միավորների ընտրության և գնահատականների մուտքագրման կարգը սահմանելու մասին հրաման:

Ուսանողների և շրջանավարտների հետ հետադարձ կապ ապահովելու նպատակով ԵՊՀ-ում իրականացվել են հարցումներ: Հարցմանը յուրաքանչյուր կիսամյակում մասնակցել է առկա ուսուցմամբ սովորող 1760 ուսանող (23,3 %), իսկ հեռակա ուսուցմամբ՝ 110 ուսանող (6,2 %): Ավարտած ուսանողների շրջանում իրականացվող «ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ» հարցումներին առկա ուսուցմամբ մասնակցել է 205 շրջանավարտ (7,7 %), իսկ հեռակա ուսուցմամբ՝ 26 շրջանավարտ (5,7 %): Իրականացվել են հետազոտություններ/վերլուծություններ ԵՊՀ-ում սովորող ուսանողների առաջադիմության և ԵՊՀ-ից ուսանողների հեռացման պատճառների մասին: Նախատեսվում է նաև իրականացնել ԵՊՀ ուսանողների և դասախոսների հետ սոցիոլոգիական որակական հետազոտություններ՝ արդեն իսկ ստացված քանակական տվյալները հավելյալ մեկնաբանելու համար:

2024 թ. ընթացքում իրականացվել են ԵՊՀ դասախոսների վերապատրաստումներ ընդհանուր առմամբ 8 թեմաներով, որոնց մասնակցել է 167 դասախոս:

2024 թ. ՇԿԿ-ն իրականացրել է կրթական ծրագրեր հետևյալ ուղղություններով՝ քաղծառայողների մասնագիտական վերապատրաստում, նախարարությունների աշխատակիցների վերապատրաստում այլ ծրագրերով, «Բնագիտությունը զվարճալի է. տե՛ս, շոշափի՛ր, փորձի՛ր» ամառային աշխատարան դպրոցականների համար: Առաջին երկու ծրագրերի շրջանակում իրականացվել է շուրջ 29 վերապատրաստում, որին մասնակցել է 170 քաղծառայող: «Բնագիտությունը զվարճալի է. տե՛ս, շոշափի՛ր, փորձի՛ր» ամառային աշխատարանին մասնակցել է 17 աշակերտ: Այսինքն՝ լրացուցիչ կրթական ծրագրերի մասնակիցների ընդհանուր թիվը տարվա ընթացքում կազմել է 187 մարդ:

Հաշվետու տարին մեզ համար նշանավորվել է ևս մեկ կարևոր իրադարձությամբ. ԵՊՀ-ում գործունեությունը սկսել է ՍԹԵՄ ավագ դպրոցը: 2023-2024 ուսումնական տարում դպրոց են ընդունվել 36 դիմորդ, 28 սովորող՝ 10-րդ դասարան, 8՝ 12-րդ դասարան:

ԵՊՀ ավելի քան մեկդարյա կրթական ավանդույթը զուգահեռելով ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներին՝ ԵՊՀ ՍԹԵՄ ավագ դպրոցը նպատակ ունի

ստեղծելու 21-րդ դարի հրամայականներին համահունչ կրթական միջավայր և տարածելու ԵՊՀ հետազոտահենք կրթության մշակույթը:

Ի դեպ, ԵՊՀ ավագ դպրոցն այս տարի առաջին անգամ 10-րդ դասարանի աշակերտների համար հայտարարել է 2024-2025 ուսումնական տարվա ընդունելություն՝ հասարակագիտական ուղղությամբ:

Համալսարանը կարևորում է ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումը, որը ներառում է նորարարական մեթոդների կիրառում, ուսումնառության համար հարմարավետ միջավայրի ստեղծում և ներառականության խթանում:

Այս մոտեցումների և մշտական բարեփոխումների շնորհիվ համալսարանը ոչ միայն ապահովում է որակյալ կրթություն, այլև նպաստում է ուսումնառության գործընթացի հետագա արդիականացմանը՝ պատրաստելով մրցունակ մասնագետների:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ-ն մշտապես ձգտում է աջակցել իր պրոֆեսորադասախոսական կազմին, հետազոտողներին ակադեմիական գերազանցության և նորարարության հասնելու ճանապարհին: Համալսարանում շարունակաբար իրականացվում են ծրագրեր՝

ստեղծելու ժամանակակից լաբորատորիաներ, գիտահետազոտական կենտրոններ և տեխնոլոգիական ռեսուրսներ, որոնք համալսարանականների համար կապահովեն ակադեմիական անհրաժեշտ միջավայր՝ արդիական հետազոտություններ կատարելու, նոր գաղափարներ ուսումնասիրելու և ստեղծելու համար:

Շարունակական ներդրումներ են կատարվում գիտական ենթակառուցվածքներում՝ ապահովելով տեխնիկական հագեցվածությունը և նպաստելով հետազոտական մեթոդների կատարելագործմանը:



Գիտության ոլորտին ուղղված պետության ֆինանսավորման զգալի աճի և ԵՊՀ ներդրած միջոցների արդյունքում արձանագրվել են էական բարեփոխումներ: ԵՊՀ աշխատակիցների գիտահետազոտական գործունեությունը խրախուսելու և համապատասխան հետազոտական արդյունքների միջազգայնացմանը նպաստելու համար բարեփոխվել է ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար հատկացվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը, առավել արդյունավետ է դարձվել ԵՊՀ աշխատակիցների միասնական հաշվետվողականության համակարգի՝ «intranet.ysu.am»-ի աշխատանքը: Հաշվետու ժամանակահատվածում նշված համակարգ ներբեռնվել է 30 մենագրություն, 245 գիտաժողովի նյութ և 1161 հոդված: «Scopus» գիտական շտեմարանում ընդգրկված ամսագրերում հրապարակված գիտական աշխատանքների թվով ԵՊՀ-ն սահմանել է նոր ռեկորդային ցուցանիշ:

Ընթացիկ տարում միջազգային հեղինակավոր ամսագրերում հրապարակված ԵՊՀ գիտական աշխատանքների թիվը դեկտեմբերի 15-ի դրությամբ հասել է 528-ի:

Աշխատանքներից 433-ը գիտական հոդվածներ են, որոնցից ավելի քան 200-ը տպագրվել են առաջին քառորդում ընդգրկված ազդեցության գործակից ունեցող ամսագրերում: Տարվա ավարտին ակնկալվում է, որ հրապարակումների թիվն ավելի է մեծանալու: Համեմատության համար նշեմ, որ 2023 թվականին «Scopus»-ում հրապարակված ԵՊՀ գիտական աշխատանքների թիվը կազմել է 432, այսինքն՝ այս տարվա ցուցանիշը արդեն իսկ 21 %-ով գերազանցում է նախորդ տարվա արդյունքին:



Հաշվետու տարում շարունակվել են արտոնագիր գրանցելու և այն փաստաթղթավորելու, շահառուներին խորհրդատվական աջակցության տրամադրելու և իրազեկելու ուղղությամբ աշխատանքները, մշակվել է մտավոր սեփականության իրավունքի (Intellectual Property Policy) քաղաքականության նախնական տարբերակը: 2023-2024 թթ. գրանցվել է 8 արտոնագիր:

Հաշվի առնելով ԵՊՀ-ի և Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գիտական քաղաքականության առաջնահերթություններն ու ընդհանրությունները՝ ԵՊՀ աշխատակիցների գիտահետազոտական գործունեությունը խրախուսելու և դրա արդյունքները միջազգայնացնելու նպատակով միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում հրապարակված 5 հոդվածների համար (24-1OAJ-YSU-

BIOL-0010; 24-1OAJ-YSU-BIOL-0011; 24-1OAJ-YSU-BIOL-0012; 24-1OAJ-YSU-BIOL-0016 և 24-1OAJ-YSU-BIOL-0019) հատկացվել է 4,007,896 ՀՀ դրամ փոխհատուցում:

Իրականացվել է ԵՊՀ ներքին գիտական դրամաշնորհների ֆինանսավորման և ԵՊՀ ճանապարհորդական դրամաշնորհների (Travel Grant) տրամադրման նոր կարգերի խմբագրում ու թարմացում: 2023 թվականին ֆինանսավորվել է 6 ներքին գիտակրթական դրամաշնորհ, իսկ 2024 թ.՝ ԼՂ-ից բռնի տեղահանվածների հիմնախնդիրները ուսումնասիրող 5 դրամաշնորհ և գիտակրթական՝ 8 դրամաշնորհ (2023-2024 թթ.՝ 19 դրամաշնորհ): ԵՊՀ հիմնական 70 աշխատակիցների տրամադրվել է ճանապարհորդական դրամաշնորհներ:



ՀՀ բուհերի շարքում ԵՊՀ-ն Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հետ արդյունավետ համագործակցության առաջատարն է: Այդ մասին է վկայում ԲԿԳԿ-ի կողմից 2023-2024 թթ. ԵՊՀ 88 գիտական թեմաների ֆինանսավորման փաստը:

2024 թվականի ընթացքում Երևանի պետական համալսարանը ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հետ համաֆինանսավորմամբ կազմակերպել ու անցկացրել է 13 գիտական միջոցառում և երիտասարդ գիտնականների դպրոց: Բացի դրանից՝ գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար մինչև 20 մլն ՀՀ դրամի չափով ԵՊՀ 10 ներկայացուցիչների տրամադրվել է ֆինանսական աջակցություն՝ սարք/սարքավորումներ ձեռք բերելու համար:



ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից Բարձր որակավորում ունեցող մասնագետների (ԲՈՈՒՄ) ներգրավման նպատակային ծրագրի շրջանակում տրամադրվող աշխատավարձի մասնակի սուբսիդավորման շրջանակներում ԵՊՀ-ից ներառվել է 2 շահառու (1,592,950 դրամ փետրվար-հուլիս ամիսների համար):

Հաշվետու տարում ԵՊՀ հրատարակչությունը հրատարակվել է հումանիտար, հասարակագիտական, բնական և ճշգրիտ գիտությունների ուղղությամբ 53 աշխատություն՝ մենագրություններ, դասագրքեր, ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ, դասախոսություններ և այլն:

ԵՊՀ ամսագրերի թվայնացման, որակի ու միջազգային տեսանելիության բարձրացման նպատակով ԵՊՀ-ում շարունակվում են բարելավման և առաջխաղացման աշխատանքները: Այս տարի ևս շարունակվել են աշխատանքները՝ ուղղված համալսարանում հրատարակվող 22 ամսագրի գործունեությունը «OJS» (Open Journal System) ամսագրերի էլեկտրոնային կառավարման համակարգում ծավալելու գործում:

Հաշվետու ժամանակահատվածում լույս է տեսել ԵՊՀ գիտական ամսագրերի 73 թողարկում: Հիմնադրվել է միջազգային չափանիշներին համապատասխանող «Journal of Iranian Linguistics» գիտական ամսագիրը, որը ներկայացնում է իրանի լեզվաբանության առանձնահատկությունները:

Շարունակաբար վերանայվում են ԵՊՀ հրատարակչական էթիկայի նորմերն ու քաղաքականությունը՝ «COPE» (Committee of Publication Ethics) գիտահրատարակչական փոփոխված քաղաքականության նորացված սկզբունքներին համապատասխան: Շարունակվել է համալսարանական ամսագրերի խմբագրակազմերի համալրումը արտերկրի գիտակրթական կառույցներում աշխատող առաջատար մասնագետներով: Ամսագրերի մեծ մասի խմբագրական խորհուրդներում նրանց թիվը կեսից ավելին է:

ԵՊՀ ամսագրերը շարունակվում են ներառվել և ինդեքսավորվել միջազգային հեղինակավոր շտեմարաններում՝ «EBSCO», «DOAJ», «ERIHPlus», «Index Copernicus», «Liguilist», «elibrary», «Cyberleninca», «Miar», «ZbMath», «Mathnet.ru» և այլն: «Google Scholar» հարթակի տվյալների համապատասխան՝ էականորեն աճել են ամսագրերին արվող հղումները: ԵՊՀ երեք գիտական ամսագիր «IndexCopernicus»-ում թվային ինդեքս են ստացել, մեկ ամսագիր արդեն հատել է 100 միավորի շեմը: Էականորեն ավելացել են նաև «WoS» (Web of Science), ինչպես նաև «Scopus» շտեմարաններում ընդգրկված ամսագրերից համալսարանական ամսագրերին արվող հղումների քանակը:

Համալսարանի 5 գիտական ամսագիր ընդգրկված է «ERIHPlus» եվրոպական հումանիտար ամսագրերի հեղինակավոր շտեմարանում: Ներկայումս միջազգային շտեմարաններում գրանցված ամսագրերի քանակով ԵՊՀ-ն ինստիտուցիոնալ առումով ՀՀ-ում առաջատար է: Բացի դրանից՝ համալսարանական 2 ամսագիր ներկայացվել են «WoS»/«Scopus» շտեմարաններում ինդեքսավորման:

ԵՊՀ հրատարակչության հրատարակած գրքերը ներկայացվել են եվրոպական գրահրատարակչական ամենաբարձր հարթակում՝ Ֆրանկֆուրտի գրքի միջազգային տոնավաճառում: Գրքի համաշխարհային խոշորագույն միջոցառումը նպատակ ունի աշխարհին ներկայացնելու մասնակից երկրների գրահրատարակչական արտադրանքը: Այդ օրերին ԵՊՀ հրատարակչությունը, բացի հրատարակած գրքերի

ներկայացումից, մասնակցել է նաև Եվրոպական համալսարանների հրատարակիչների ասոցիացիայի կոնֆերանսին:

2023-2024 ուստարում ԵՊՀ գրադարանում կատարվել են աշխատանքներ, որոնք ուղղված են եղել գրադարանի հասանելիության ապահովմանը և թվային ռեսուրսների ավելացմանը: ԵՊՀ-ն բաժանորդագրվել է «EBSCO» և «JSTOR» շտեմարաններին: Այս շտեմարաններում առկա ռեսուրսները հասանելի են ԵՊՀ ներքին ցանցին միացված ցանկացած համակարգչից, այդ թվում՝ նաև Իջևանի մասնաճյուղից:

Համագործակցության շրջանակում իրականացվել է նոր ծրագիր՝ «MIT-Armenia Seed Fund»-ը, որը ֆինանսավորել է «MIT» դասախոսների՝ Հայաստանում համագործակցություններ հաստատելու ու զարգացնելու նախնական աշխատանքները: Սա լավ հնարավորություն է մեր հետազոտողների համար՝ նոր կապեր հաստատելու կամ «MIT» իրենց գործընկերների հետ ունեցած հարաբերությունները զարգացնելու գործում:

ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի դեղերի որակի հսկման և մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոնը ստացել է պետական հավատարմագիր, ինչի արդյունքում մեր մասնագետներն իրականացնելու են դեղերի և հանքանյութերի փորձաքննություն:

Բացի դրանից՝ այս ժամանակահատվածում ամփոփվել են «Fast ADVANCE» հետազոտական դրամաշնորհային ծրագրի շրջանակում ԵՊՀ-ի հետ համատեղ իրականացված 2՝ «Մեքենայական ուսուցում» և «Կենսատեխնոլոգիա» նախագծերը: «Մեքենայական ուսուցում» խմբի շրջանակում հրապարակվել է 5 գիտական հոդված (3-ը՝ Q1 գործակցով ամսագրերում), ինչպես նաև 2 հրապարակում միջազգային գիտաժողովներում, մեքենայական ուսուցման 5 դասընթաց Հայաստանում (2-ը՝ ընդգրկված ԵՊՀ կրթական ծրագրերում), ինչպես նաև ավելի քան 200 մասնակցի վերապատրաստում ոլորտային դասընթացների շրջանակներում:

«Կենսատեխնոլոգիա» նախագծի հետազոտական գործունեության ընթացքում հրապարակվել է 6 գիտական հոդված (4-ը՝ Q1, 2-ը՝ Q2 գործակցով ամսագրերում), ինչպես նաև 10 մասնակցություն միջազգային գիտաժողովների և այց գիտական ղեկավարի լաբորատորիա՝ Համբուրգ, ավելի քան 130 մասնակիցների ներգրավմամբ վերապատրաստման 4 դասընթաց և խորհրդատվություն կենսատեխնոլոգիայի ոլորտում:



Ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների ակտիվ ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում Երևանի պետական համալսարանի առաջնահերթ նպատակներից է: Այդ նպատակն իրագործելու համար համալսարանում պարբերաբար կատարվում են լսարանների և լաբորատորիաների վերանորոգման ու նորագույն սարքավորումներով համալրման աշխատանքներ, ստեղծվում նոր ենթակառուցվածքներ:

«Ֆիլիպ Մորրիս» ընկերության «PMI Science» (Փի Էմ Այ Սայենս) գիտահետազոտական կենտրոնի հետ համագործակցության արդյունքում ԵՊՀ-ում մաթեմատիկական հետազոտությունների նոր կենտրոն է հիմնվել:

Կենտրոնի տարածքը վերանորոգվել է ընկերության միջոցներով, որը նաև հետազոտություններ է պատվիրում մեր գիտնականներին: Այն ծառայում է թե՛ ուսանողներին, թե՛ դասախոսներին ու հետազոտողներին, որոնք նոր միջավայրում ուսուցումը կազմակերպելու և առաջնակարգ հետազոտություններ կատարելու հնարավորություն ունենան՝ օգտագործելով նաև արհեստական բանականությունը:

Նախագծվել, վերանորոգվել և կոմունիկացիաներով է հագեցվել առանձին 2*40 KW էլեկտրական հոսանքի սնուցումով նոր սերվերային սենյակ, որը կահավորվել է 2 գերհզոր՝ «Nvidia DGX A100» և «Nvidia DGX H100» սերվերային համակարգիչներով:

«NVIDIA A100» և «NVIDIA H100» հաշվողական համակարգերը օգտագործվում են ԵՊՀ մեքենայական ուսուցման խմբի կողմից արհեստական բանականության նոր գործիքների մշակման համար: Մասնավորապես, կատարվում է 30 մլն-ից մինչև 2 մլրդ պարամետրեր պարունակող նեյրոնային ցանցերի ուսուցում մինչև 50 մլրդ թոքեն տվյալների շտեմարանների վրա: 2024 թվականի ընթացքում մշակվել են փոքր օրգանական մոլեկուլների հետ աշխատող նեյրոնային ցանցեր, մուլտի սպեկտրալ արբանյակային լուսանկարների և ռադիո ազդանշանների քարտեզների հետ աշխատող նեյրոնային ցանցեր:

Այս մշակումների որոշ արդյունքներ ներկայացնող գիտական հոդվածները այժմ գրախոսության փուլում են: Նույն հաշվողական համակարգերը օգտագործվում են նաև Հաշվողական նյութագիտության խմբի հետազոտողների կողմից՝ նոր նյութերի հատկությունների հաշվարկի համար: «DGX A100» համակարգչից օգտվում են նաև ԵՊՀ մի շարք հետազոտական լաբորատորիաների գիտաշխատողներ և «Կիրառական վիճակագրություն և տվյալագիտություն» մագիստրոսական ծրագրի ուսանողներ:

ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտում ստեղծվում է Օպտիկական միկրոհամակարգերի մշակման և հետազոտման գիտակրթական կենտրոն, որի նպատակն է նորագույն սարքավորումների միջոցով մշակել միջազգային չափորոշիչներին համապատասխան օպտիկական միկրոհամակարգեր, դրանց հիմքով իրականացնել նորարար հետազոտություններ, խթանել միջգիտակարգային համագործակցությունը, պատրաստել բարձր տեխնոլոգիաների ոլորտի արհեստավարժ կադրեր, ձևավորել փոխգործակցային նոր ձևաչափեր կրթության, գիտության ու արդյունաբերության միջև:

Կենտրոնի ստեղծումն իրականացվում է Համաշխարհային բանկի համաֆինանսավորմամբ Կրթական ծրագրերի կենտրոն-ԾԻԳ-ի աջակցությամբ

իրականացվող «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակում և ԵՊՀ աջակցության արդյունքում:



Կենտրոնը, ծառայելով նաև որպես փորձարարական բազա ուսանողների որոշ մասնագիտական առարկաների լաբորատոր աշխատանքների, ավարտական ու մագիստրոսական թեզերի կատարման համար, նպաստելու է համալսարանական կրթության հետազոտական բաղադրիչի զարգացմանը:

Այս կենտրոնի ստեղծումն ու դրա նպատակները համահունչ են ազգային առաջնահերթություններին, ինչպես նաև համալսարանի առաքելությանն ու ռազմավարությանը:

ԵՊՀ-ում հանդիսավորությամբ բացվել է Վրացագիտության կենտրոն, որը հնարավորություն է ընձեռում ավելի ամուր ու գործնական հիմքերի դնելու վրացերենի դասավանդումը, արմատապես նոր բովանդակություն ու լիցք հաղորդելու վրացագիտական հետազոտություններին ու հայ-վրացական բարեկամական հարաբերություններին: ԵՊՀ վրացագիտության կենտրոնի բացման շրջանակում ԵՊՀ-ում էր Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության հարցերի նախարար Գեորգի Ամիլախվարիի գլխավորած պատվիրակությունը:

Վերանորոգվել, նոր սարքավորումներով համալրվել ու կահավորվել են Քիմիայի ֆակուլտետի ուսումնական լաբորատորիաները: Ուսանողներն արդեն հնարավորություն ունեն պրակտիկ փորձ ձեռք բերելու Անօրգանական և անալիտիկ քիմիայի երեք, ինչպես նաև Ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնի վերանորոգված, նորագույն սարքավորումներով համալրված և կահավորված երեք ուսումնական լաբորատորիաներում:

Հին սարքավորումները փոխարինվել են նորերով՝ կշեռքներ, խառնիչներ, չափիչ սարքեր, pH մետրեր, օքսիմետրեր և ժամանակակից այլ սարքավորումներ, որոնք ուսումնական գործընթացը կդարձնեն առավել հիմնարար:

Հիմնովին վերանորոգվել են ԵՊՀ ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնի հինգ լաբորատորիաներ:

Կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնի՝ 2023 թ. կարևոր ձեռքբերումներից էր ԵՊՀ ֆինանսավորմամբ կառուցված մոդուլյար ISO-7 դասի «մաքուր սենյակը»: Պանելային «մաքուր սենյակների» առկայությունը չափազանց կարևոր է նանոտեխնոլոգիաներով զբաղվող գիտական կենտրոնների համար, քանի որ նանոկառուցվածքների, նանոչափերի բարակ թաղանթների և դրանց հիման վրա կառուցված գերճշգրիտ աշխատող սարքավորումների պատրաստման ժամանակ անգամ մեկ միկրո կամ նանոչափեր ունեցող փոշեհատիկը կարող է խաթարել սարքավորման ամբողջ կառուցվածքը և աշխատանքը:

Օդի մաքրությունը ISO-7 դասի մոդուլյար «մաքուր սենյակներում» ապահովվում է երեք գերհզոր օդազտման համակարգերով, իսկ մաքրության ու օդի որակի մշտական վերահսկումը կատարվում է սենյակին կցված սենսորային համակարգերով: Սենյակի

լիարժեք մաքրությունն ապահովելու համար կպատրաստվեն նաև հատուկ նախասրահներ:

Մոտ ապագայում նախատեսվում է «մաքուր սենյակը» համալրել նաև հատուկ լաբորատոր կահույքով և տեղադրել նանոթաղանթների ստացման՝ պուլսային լազերային նստեցման (PLD) կայանք՝ հնարավորություն ստեղծելով նանոթաղանթներն աճեցնելու գերմաքուր միջավայրում, որոնք կարող են հետագայում ծառայել որպես սենսորներ, օպտիկական սարքավորումներ և այլն:

Վերանորոգված և տեխնիկապես վերազինված ուսումնական լաբորատորիաները հնարավորություն կընձեռեն ավելի բարձր հարթության վրա տեղափոխելու ուսումնական գործընթացը, ինչը հիմք կդառնա հետագայում գիտահետազոտական որակյալ և արդյունավետ աշխատանքներ կատարելու համար:

ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ

Երևանի պետական համալսարանը մշտապես առանձնահատուկ ուշադրություն է դարձնում միջազգային և հանրապետական գիտաժողովների կազմակերպմանն ու մասնակցությանը՝ գիտական մտքի փոխանակման և հետազոտությունների ընդլայնման նպատակով: Մեր կազմակերպած գիտաժողովները ծառայում են որպես

հարթակ՝ գիտնականներին, հետազոտողներին և մասնագետներին համախմբելու համար, որտեղ քննարկվում են ժամանակակից արդիական խնդիրներ և առաջարկվում նորարարական լուծումներ:

Այս միջոցառումները թույլ են տալիս ոչ միայն ամրապնդելու ԵՊՀ կապերը միջազգային գիտական հանրության հետ, այլև ներկայացնելու համալսարանի գիտական ձեռքբերումները համաշխարհային հարթակում՝ նպաստելով համալսարանի հեղինակության բարձրացմանը: Այս տարի ԵՊՀ-ն հյուրընկալել է մի շարք կարևոր գիտաժողովներ, որոնց մասնակցել են ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ճանաչում ունեցող գիտնականներ՝ ստեղծելով նոր համագործակցության հնարավորություններ:

Հաշվետու տարում ԵՊՀ-ում անցկացվել է «Համահայկական գիտաժողով-2023» գիտական միջոցառումը, որի նպատակն էր խթանել գիտության տարբեր ոլորտների զարգացումը հանրապետությունում, հնարավորություն ընձեռել մասնագետներին իրազեկ լինելու հարակից ոլորտների գիտահետազոտական աշխատանքներին և առաջընթացին, ամրապնդել և ստեղծել նոր կապեր գիտահետազոտական ինստիտուտների, կենտրոնների և համալսարանների միջև:

Այս տարվա ապրիլի 10-ին, 12-ին և 15-ին ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում առաջին անգամ անցկացվել է «Հաշվետու գիտաժողով-2024» գիտական միջոցառումը, որի հիմնական նպատակն էր ամփոփել ԵՊՀ գիտական ստորաբաժանումների գործունեությունը, հնարավորություն ընձեռել ոլորտի առաջատար գիտնականներին և հետազոտողներին ներկայացնելու իրենց գիտական հետազոտությունների արդյունքները, գործունեության ուղղություններն ու տեսլականը: Գիտաժողովը հնարավորություն է տվել խթանելու գիտության տարբեր ոլորտների զարգացումը, իրազեկ լինելու հարակից, միջգիտակարգային ոլորտների գիտահետազոտական առաջընթացին, խորացնելու և ընդլայնելու գիտահետազոտական ինստիտուտների, կենտրոնների և ֆակուլտետների գիտական համագործակցությունը: Հիմնական գիտաժողովի շրջանակում ԵՊՀ գիտական ստորաբաժանումները և ֆակուլտետները մարտ-ապրիլ ամիսներին հանդես են եկել լրացուցիչ սեմինարներով, ամփոփիչ կոնֆերանսներով՝ իրենց գործունեությունն առավել տեսանելի և հրապարակային դարձնելու նպատակով:

Արտերկրի համալսարանների և գիտական կենտրոնների հետ միջազգային համագործակցությունն ու ամրապնդումը ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով ամրագրված նպատակներից են: Այսօրինակ գործակցության շրջանակում ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում անցկացվել է «Արտաքսված և մոռացված. հայերն առանց Լեռնային Ղարաբաղի» խորագրով միջքրիստոնեական մասնագիտական առցանց գիտաժողով, որը նպատակ ուներ խաղաղաշինության

էթիկայի տեսանկյունից շեշտադրելու կրոնների դերը, նպաստելու Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ միջազգային հարթակներում իրազեկվածության բարձրացմանը, ինչպես նաև մասնագիտական տեսանկյունից քննարկելու բնագավառին առնչվող խնդիրներ և ուղենշելու լուծումներ:

ԵՊՀ-ում անցկացվել է «Քիմիայի մոլ» գիտության դպրոցը, որի շրջանակում միջազգային ճանաչում ունեցող առաջատար գիտնականները հանդես են եկել քիմիայի տարբեր բնագավառների վերաբերյալ գիտական զեկույցներով և դասախոսություններով, ներկայացրել քիմիայի ոլորտի վերջին նվաճումները և դրանց կիրառման հնարավոր բնագավառները:

Կազմակերպվել է անցկացվել է «Հայաստանը տարածաշրջանային և համաշխարհային համատեքստում» խորագրով ամառային դպրոց, որին մասնակցել են Ֆրանսիայից ժամանած 17 ուսանողներ: Ամառային դպրոցի շրջանակում անցկացվող դասընթացների շնորհիվ ուսանողները ձեռք են բերել գիտելիքներ Հայաստանի և տարածաշրջանի քաղաքական, սոցիալական և մշակութային կյանքի մասին:

Երևանի պետական համալսարանի, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության, Փարիզի «Sciences Po» համալսարանի, «Զիմին» հիմնադրամի («Zimin Foundation») գործակցությամբ կազմակերպվել է ամառային դպրոց, որի շրջանակում անցկացվող

դասընթացները բաղկացած են եղել փոխկապակցված չորս բաղադրիչներից, որոնք վերաբերում են Հայաստանի, Հարավային Կովկասի և հարևան պետությունների (ներառյալ՝ Իրանը, Թուրքիան և Մերձավոր Արևելքը), հետխորհրդային եվրասիական և համաշխարհային աշխարհաքաղաքականության մեջ Հայաստանի ներգրավվածության, Հարավային Կովկասում ռուսական քաղաքական զարգացումների թեմաներին: Այս բաղադրիչներից յուրաքանչյուրում ընդգրկվել են ակադեմիկոսների և քաղաքական փորձագետների դասախոսություններ, քննարկումներ:

ԵՊՀ-ում անցկացվել է «Հետադարձ հայացք գցելով և շարժվելով առաջ. ԵՄ-ն և ժողովրդավարության աջակցությունը մասնատված և խնդրահարույց հարևանությունում» խորագրով միջազգային գիտաժողովը: Այն կազմակերպվել էր «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրի «ԵՄ ժողովրդավարության աջակցության վերակարգավորումը. դեպի կայուն ժողովրդավարություն Արևելյան հարևանությունում» (REDEMOS) նախագծի շրջանակում:

«REDEMOS» նախագծի համակարգողն է Նորվեգիայի գիտության և տեխնոլոգիայի համալսարանը, որի հայաստանյան գործընկերն է ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը: Նախագծի շրջանակում գործընկեր 11 կազմակերպություններ համատեղ ուսումնասիրում և փորձում են հասկանալ

ժողովրդավարության կարևորությունն ու դերը Արևելյան գործընկերության երկրներում:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովի շրջանակում անցկացվել է «Գիտություն» ցուցահանդեսը՝ մեկ հարթակում համախմբելով գիտական կազմակերպությունների, ՀՀ պետական բուհերի ներկայացուցիչներին, կրթության և գիտության ոլորտում ՀՀ ԿԳՄՄՆ և ԳԱԱ գործընկերներին: ԵՊՀ-ն նույնպես մասնակցել է ցուցահանդեսին՝ առանձին տաղավարով ներկայացնելով բուհի գիտական գործունեությունը, հաջողությունները, ինչպես նաև կրթական ծրագրերը:

Հայ-չինական գիտակրթական կապերի ամրապնդման, կրթության և գիտության զարգացման, ինչպես նաև համալսարանի միջազգային գործակցության շրջանակն ընդլայնելու նպատակով ԵՊՀ-ում անցկացվել է միջազգային գիտաժողով, որի ժամանակ քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ծրագրեր և գործակցության զարգացման հեռանկարներ:

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում անցկացվել է «Գրաբարը՝ որպես արդի հայերենի բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր» խորագրով հանրապետական գիտաժողով, որի նպատակն էր բացահայտել և արժևորել գրաբարի դերն ու նշանակությունը, ներկայացնել արդի հայերենի բառապաշարում կատարված փոփոխությունները:

Երևանի պետական համալսարանում անցկացվել է Անտառագետի, Ջրաբանի և Օդերևութաբանի մասնագիտական օրերին նվիրված հանրապետական գիտաժողով, որի շրջանակում քննարկվել են հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդի հիմնախնդիրները:

Հաշվետու տարում ԵՊՀ-ում անցկացվել է «Տիեզերական ճառագայթների հետազոտում գերբարձր էներգիայի գամմա ճառագայթման միջոցով» խորագրով միջազգային գիտաժողովը: Համալսարաններն առանցքային դեր են խաղում գիտելիքի, նորարարության և համագործակցության խթանման գործում: Երևանի պետական համալսարանն ունի ակադեմիական գերազանցության, գիտահետազոտական և միջազգային համագործակցության հարուստ պատմություն, և մեզ համար մեծ պատիվ էր լինել համակազմակերպիչ ու հյուրընկալել այդ նշանավոր միջոցառումը, որը համախմբել էր գիտնականների աշխարհի 12 երկրներից՝ քննարկելու աստղաֆիզիկայի վերջին տարիների ամենահետաքրքիր հայտնագործություններից մեկը՝ գերբարձր էներգիայի գամմա ճառագայթների բազմաթիվ աղբյուրների ծագումը:

ԵՊՀ-ում անցկացվել է նաև «Ադրբեջանի ԽՍՀ-ից և Լեռնային Ղարաբաղից փախստականների խնդիրները միջազգային իրավունքում» խորագրով միջազգային

գիտաժողով՝ նվիրված Փախստականների միջազգային օրվան: Գիտաժողովին ներկայացվել են փախստականների ժամանակավոր պաշտպանության հարցերը միջազգային իրավունքի համատեքստում, ինչպես նաև Ադրբեջանից բռնի տեղահանված հայերի տնտեսական վնասները, նրանց սոցիալական ինտեգրման խնդիրներն ու էթնիկական ատելության գործոնը ԼՂ կոնֆլիկտում:

ԵՊՀ-ում տեղի է ունեցել «Արաբամուսուլմանական պատմության ուսումնասիրությունն ըստ տեքստերի, մեկնաբանությունների և փոխկապակցված հարաբերությունների» խորագրով միջազգային եռօրյա գիտաժողովը, որը նպատակ ուներ համախմբելու Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանային ուսումնասիրությունների տարբեր ոլորտների փորձագետներին:

ԵՊՀ-ում անցկացվել է Օպտիկայի և ֆոտոնիկայի ժամանակակից կիրառությունների միջազգային առաջին քոլեջը («MAOP2024»), որը նպատակ ուներ ստեղծելու հարթակ աշխարհի գիտնականների համար՝ ներկայացնելու բնագավառում վերջին հետազոտությունների արդյունքները: Քոլեջը ԵՊՀ օպտիկայի լաբորատորիաներում մեկշաբաթյա գործնական պարապմունքների և դրանց հաջորդող մեկշաբաթյա զեկուցումների, պանելային քննարկումների համադրություն էր, որի ժամանակ տարբեր երկրների լավագույն գիտնականները և ուսանողները ներկայացրել են

ոլորտի նորարարությունները՝ լաբորատոր միջավայրում զուգահեռաբար իրականացնելով հետազոտական ծրագրեր:

Միջոցառման շրջանակում ԵՊՀ էին ժամանել աշխարհի ավելի քան 12 գիտահետազոտական հաստատություններից հրավիրված բանախոսներ, այդ թվում՝ շվեյցարացի հայտնի ֆիզիկոս, բազմաթիվ մրցանակների դափնեկիր Ուրսուլա Քելլերը: Մեր հանդիպման ժամանակ նա փաստեց, որ Հայաստանում օպտիկայի և ֆոտոնիկայի բնագավառում առաջընթացը նկատելի է:

Երևանի պետական համալսարանում տեղի է ունեցել «Հայաստան-Գերմանիա գիտության օր» խորագրով երկօրյա միջոցառումը, որը նպատակ ուներ ամփոփելու Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության՝ վերջին տարիների գիտական ձեռքբերումները, ամրապնդելու հետազոտությունների, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտում գործակցային կապերն ու քննարկելու դրանց ընդլայնման հնարավորությունները:

Անցկացվել է նաև «Մաթեմատիկական անալիզ, դիֆերենցիալ հավասարումներ և կիրառություններ» («Analysis, PDEs and Applications») խորագրով միջազգային գիտաժողովը, որը նպատակ ուներ խթանելու Հայաստանի

մաթեմատիկական կենտրոններում մաթեմատիկական ուղղությունների, հատկապես՝ ֆունկցիաների տեսության, հարմոնիկ անալիզի, կոմպլեքս անալիզի, գծային և ոչ գծային դիֆերենցիալ հավասարումների, սպեկտրալ վերլուծությունների, ֆիզիկամաթեմատիկական հավասարումների, ինչպես նաև ֆիզիկայի որոշ ուղղությունների հետագա առաջընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել «Հայաստանը որպես քաղաքակրթական խաչմերուկ. պատմամշակութային առնչություններ» խորագրով միջազգային գիտաժողովը, որի մասնակիցների մասնագիտական բարձր հեղինակությունը, ինչպես նաև լայն աշխարհագրությունը ցույց են տալիս, որ Հայաստանի՝ որպես քաղաքակրթության կարևոր կենտրոններից մեկի վերաբերյալ գիտական քննարկումները կարևոր ու արդիական են մեր օրերում:

Որպես գիտաժողովի կազմակերպիչ կողմերից մեկը՝ Երևանի պետական համալսարանը պատրաստ է իր նպաստը բերել նման գիտաժողովների կազմակերպմանն ու անցկացմանը, աջակցել տարբեր հետազոտողների միջև կապերի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Որպես մայր բուհ՝ մենք պատրաստ ենք հարթակ դառնալու հայագիտական քննարկումների համար, աջակցելու տարբեր երկրներում գործող հայագետների ջանքերի միավորմանն ու հայագիտության ավելի ակտիվ զարգացմանը:

Ապագային միտված ծրագրերի, հետազոտությունների և միջազգային համագործակցության շնորհիվ ԵՊՀ-ն շարունակում է պահպանել իր տեղը՝ որպես

տարածաշրջանային առաջատար գիտական կենտրոն, որը պատրաստ է դիմագրավելու ժամանակակից աշխարհի մարտահրավերներին ու նպաստելու գիտության և հասարակության զարգացմանը:

ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Վերջին տարիների ընթացքում աստիճանաբար ավելի ու ավելի են հստակեցվում ԵՊՀ միջազգայնացման հիմնական առաջնահերթությունները: Այս գործընթացն ապահովում է հայաստանյան գիտակրթական համակարգի մերձեցումը միջազգային գործընկերների հետ և երաշխավորում ինչպես լավագույն միջազգային փորձի փոխառման արդյունավետությունը, այնպես էլ ԵՊՀ-ի կողմից մշակվող կրթական և գիտական բովանդակության հաղորդակցումն արտաքին աշխարհի հետ: ԵՊՀ միջազգայնացման կարևոր առաջնահերթություններից է համաշխարհային մակարդակում համալսարանի տեսանելիության և ճանաչելիության բարձրացումը, ինչի ուղղակի արդյունքն են համալսարանականների կողմից բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում տպագրվող հոդվածների, ինչպես նաև միջազգային հեղինակավոր համալսարաններից դեպի ԵՊՀ և հակառակը դասախոսական և ուսանողական շարժունության տեսանելի աճը: ԵՊՀ-ի կողմից իրականացվող համագործակցային ծրագրերի և միջազգային ասպարեզում ցուցաբերած ակտիվության արդյունքն են նաև վարկանիշավորման հեղինակավոր աղյուսակներում համալսարանի հայտնվելն ու դիրքի բարելավումը:

Անցած տարում զգալի քայլեր են կատարվել ԵՊՀ-ն միջազգային առաջատար կրթական ու հետազոտական կենտրոն դարձնելու ուղղությամբ:

Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 270 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների

հետ: Հաշվետում տարում կնքվել են 23 նոր պայմանագրեր օտարերկրյա բուհերի հետ, վերակնքվել՝ 3-ը: Համալսարանն անդամակցել է 34 միջազգային կազմակերպությունների և կոնսորցիումների:

Ինչպես և նախորդ տարիներին, 2023-2024 ուստարում Երևանի պետական համալսարանն ակտիվորեն մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպմանը:

Հաշվետու տարում նկատվել է համալսարանում սովորող օտարերկրյա քաղաքացիներ աճ, նախորդ՝ 2022-2023 ուստարվա համեմատ այն ավելացել է 41 % -ով, իսկ դասախոսների թիվը կրկնապատկվել է: Ընդլայնվել է նաև համագործակցության աշխարհագրությունը, մասնավորապես հաջողվել է ուսանողներ հավաքագրել Բանգլադեշի Ժողովրդական Հանրապետությունից և Հնդկաստանից:

2023-2024 ուսումնական տարում համալսարանի ֆակուլտետներում, ինստիտուտներում և կենտրոններում սովորել են 484 օտարերկրյա քաղաքացիներ աշխարհի 36 երկրներից, այդ թվում՝ 20 ուսանող նախապատրաստական դասընթացներում, 188 ուսանող՝ առկա բակալավրիատում, 22 ուսանող՝ հեռակա

բակալավրիատում, 66 ուսանող՝ առկա մագիստրատուրայում, 8 ուսանող՝ հեռակա մագիստրատուրայում, 14 ուսանող՝ առկա ասպիրանտուրայում: Բացի դրանից՝ միջբուհական պայմանագրերի, «Էրազմուս+» ծրագրերի, ամառային դպրոցների շրջանակներում կազմակերպվել է 166 ուսանողի կարճաժամկետ (մինչև 1 տարի) ուսումնառություն համալսարանում: Համեմատության համար պետք է փաստել, որ անցած ուսումնական տարում ԵՊՀ-ում սովորել է 397 օտարերկրյա ուսանող:

Վճարովի ուսուցման համակարգում սովորող օտարերկրյա ուսանողների թիվը նախապատրաստական դասընթացներում, բակալավրիատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում կազմել է 281, իսկ անվճար համակարգում՝ 27:

Հաշվետու տարում որպես հրավիրյալ դասախոսներ, գիտաշխատողներ, խորհրդատուներ և լաբորանտներ ձևակերպվել են 62 օտարերկրյա քաղաքացիներ՝ նպաստելով համալսարանի գիտակրթական միջավայրի միջազգայնացմանը, գիտական ներուժի հարստացմանը և նոր գիտելիքների ու փորձի փոխանակմանը:

Հարկ է ընդգծել, որ աշխարհաքաղաքական զարգացումների, ՀՀ միգրացիոն քաղաքականության և այլ պատճառներով սահմանափակվել է ասիական, արաբական և աֆրիկյան որոշ երկրների քաղաքացիների մուտքը (այդ թվում՝ ուսման նպատակով) Հայաստանի Հանրապետություն, բացի դրանից՝ լուրջ խնդիրներ են ԵՊՀ հանրակացարանում տեղերի սահմանափակությունը, բնակարանների վարձերի կտրուկ աճը վերջին տարիներին, ինչպես նաև գների աճը: Այս բոլորը լուրջ խոչընդոտներ են օտարերկրյա սովորողների թվի ավելացման ճանապարհին:

2023-2024 ուսումնական տարում իրականացվել է 800 անձ/գործուղում. գործուղվել են 420 մասնագետ, 198 ուսանող և 4 ասպիրանտ: Համեմատության համար անհրաժեշտ է նշել, որ նախորդ տարի իրականացվել է 680 գործուղում: Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի վարչական կազմից գործուղվել է 178 անձ: «Էրազմուս+» ծրագրի Գործողություն 1-ի շրջանակում ԵՊՀ-ն համագործակցում է եվրոպական 22 երկրների 77 հաստատությունների հետ, որոնց շրջանակում 2023-2024 ուսումնական տարում 31 մասնագետ և 51 ուսանող մեկնել են գործընկեր բուհեր՝ դասավանդելու և սովորելու:

Այս ծրագրերը նպաստում են համալսարանի միջազգային ինտեգրմանը, կրթության և կառավարման որակի բարձրացմանը, ուսանողների և մասնագետների մասնագիտական աճին, միջմշակութային հաղորդակցությանն ու ԵՊՀ հեղինակության բարձրացմանը:

Հաշվետու տարում թարմացվել է ֆակուլտետներում կազմակերպվող օտարալեզու դասընթացների ցանկը: Շնորհիվ «Էրազմուս+» ծրագրերի՝ մի շարք դասընթացներ ներառում են արդիական պլաններ, ինչպիսիք են՝ թվայնացումը, կանաչ կրթությունը, կրթության թափանցելիությունը:

Իրականացվել է մի շարք դրամաշնորհային ծրագրերի համակարգում, այդ թվում՝ «T-Green», «T4Green», «ReGrad», «MicroGear», «KPI4He», «Cluvex», «APPEAR» դրամաշնորհային ծրագրերի, որոնցում ներգրավված է ԵՊՀ-ն:

Հաշվետու տարում ԵՊՀ-ում մեկնարկել է «Էրազմուս+» ծրագրի շրջանակում իրականացվող «Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՇ) ստեղծում» (KPI4HE) նախագիծը: Այս նախագծի համակարգողը ԵՊՀ-ն է:

Ծրագիրը նպատակ ունի բարելավվելու բարձրագույն կրթության համակարգի կառավարումը, համալսարանների ռազմավարական պլանավորումը, որոնք կնպաստեն որակյալ ու ներառական, թվային և կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության զարգացմանը Հայաստանում:

Երևանի պետական համալսարանը բարելավել է դիրքերը աշխարհի լավագույն համալսարանները վարկանիշավորող հեղինակավոր աղյուսակներում:

«QS» վարկանիշավորման աղյուսակի նոր արդյունքների համաձայն՝ Երևանի պետական համալսարանը շարունակում է լինել հայաստանյան միակ բուհը՝ ընդգրկված լավագույնների ցանկում:

Ըստ նոր տվյալների՝ ԵՊՀ-ն «QS World University Rankings»-ում զբաղեցնում է 901-րդ տեղը, «QS Europe University Rankings»-ում՝ 412-րդ, իսկ «QS Europe University Rankings-Western Asia»-ում՝ 22-րդ հորիզոնականը: Առանձին բնագավառների վարկանիշավորմամբ ԵՊՀ-ն ֆիզիկա և աստղաֆիզիկա ուղղություններով, ըստ «QS WUR Ranking By Subject»-ի, 601-620-րդ տեղում է:



ԵՊՀ-ն առաջին անգամ ընդգրկվել է նաև «Times Higher Education»-ի կողմից վարկանիշավորված աշխարհի լավագույն համալսարանների ցանկում, ինչը վկայում է, որ ԵՊՀ գիտական արդյունքները համապատասխանում են միջազգային չափանիշներին: Ըստ «Times Higher Education»-ի վերջին տվյալների՝ ԵՊՀ-ն աշխարհում 1501+ հորիզոնականում է, ֆիզիկայի բնագավառում՝ 1001+, իսկ միջգիտակարգային վարկանիշավորմամբ՝ 601+ տեղում («2025 Times Higher Education Interdisciplinary Science Rankings in association with Schmidt Science Fellows»):



Աշխարհի լավագույն վարկանիշավորման աղյուսակներում հայտնվելն ու շարունակաբար դիրքերի բարելավումը կարևոր են համալսարանի ճանաչելիության և հեղինակության բարձրացման համար, ինչի շնորհիվ ստեղծվում են նոր

հնարավորություններ՝ համաշխարհային կրթական ու գիտական հարթակներում առավել հեղինակավոր դիրք զբաղեցնելու համար:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանը մշտապես կարևորել է համագործակցությունը՝ որպես կրթության և գիտության ոլորտներում կայուն առաջընթացի ապահովման հիմնաքար: Անցած տարում մեր գործընկերային կապերն ընդլայնվել ու խորացել են՝ ընդգրկելով թե՛ տեղական, թե՛ միջազգային նոր ուղղություններ: Այսօր, երբ կրթությունը և գիտությունը դառնում են ավելի ինտեգրված տնտեսության և հասարակության պահանջներին, ԵՊՀ-ն շարունակաբար զարգացնում է իր գործընկերային կապերը:

Կրթության զարգացման երաշխիքներից մեկը կապն է աշխատաշուկայի հետ: Համալսարանի տրամադրած գիտելիքը պետք է իր արդյունավետ կիրառությունը գտնի աշխատանքում: Հենց համագործակցությունների արդյունքում մենք կկարողանանք հասկանալ ու ձևակերպել արդի միտումները, վերանայել մեր կրթական ծրագրերն ու նպաստել տարբեր ոլորտների զարգացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում *Երևանի պետական համալսարանի և ԱՄՆ ճշմարտության և արդարության կենտրոնի միջև* ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ ամրագրելու համագործակցությունը ԵՊՀ «միջազգային դատարաններ և արբիտրաժ» մագիստրոսական կրթական ծրագրի իրականացման, կայացման և հետագա զարգացման գործում:

Համագործակցության շրջանակում կենտրոնը, ի թիվս այլ հանձնառությունների, պատրաստ է ծրագրի զարգացմանը նպաստելու նպատակով ԵՊՀ-ին տրամադրել մասնագիտական աջակցություն, այդ թվում՝ ռազմավարական պլանավորման և միջազգայնացմանն ուղղված գործընթացների վերաբերյալ:

ԵՊՀ-ի և ԱՄՆ ճշմարտության և արդարության կենտրոնի կողմից կիրագործվեն նաև բարձրագույն իրավաբանական կրթությանն առնչվող ակադեմիական տարբեր նախագծեր, կկատարվեն հետազոտական աշխատանքներ ու կիրականացվեն փոխանակման ծրագրեր: Բացի դրանից՝ կենտրոնը պատրաստ է տրամադրելու կրթաթոշակներ մեր ուսանողներին՝ նպաստելով կրթության հասանելիությանը:

Անցած ուստարում աշխատանքային այցով գործընկերներիս հետ եղել եմ Քուվեյթում, որտեղ ունեցել ենք մի շարք հանդիպումներ՝ միտված ԵՊՀ համագործակցային առկա կապերի զարգացմանն ու նոր հարաբերությունների հաստատմանը: Այցի շրջանակում եղել ենք *Քուվեյթի համալսարանում,* հանդիպել ռեկտորի՝ պրոֆեսոր Ֆայեզ Մանշար Ալ-Դուֆիրիի հետ և քննարկել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համատեղ ծրագրերի իրագործման հնարավորությունները:

Հանդիպել ենք նաև *Քուվեյթի համալսարանի լեզուների ուսուցման կենտրոնի* տնօրենի՝ դոկտոր Խալիդ Ալ-Ֆադլիի հետ, խոսել ԵՊՀ-ում արաբագիտության դասավանդման, ոլորտում արձանագրած հաջողությունների և երկկողմ գործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված նախագծերի, այդ թվում՝ ուսանողների փոխանակման ծրագրերի մասին:

«Կոնվերս Բանկ» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Անդրանիկ Գրիգորյանի հետ ստորագրել ենք համագործակցության համաձայնագիր՝ միավորելու երկու կառույցների ջանքերը ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման, կրթական ու գիտահետազոտական աշխատանքներ կատարելու, ինչպես նաև համատեղ այլ ծրագրեր իրականացնելու համար:

Համագործակցության շրջանակում նախատեսում ենք համատեղ մշակել և իրականացնել կրթական ու հետազոտական ծրագրեր, կազմակերպել գիտաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ, այդ թվում՝ միջազգային, ընկերության աշխատակիցների համար կազմակերպել կարճաժամկետ դասընթացներ, ապահովել նրանց մասնակցությունը բակալավրի և մագիստրոսի համապատասխան կրթական ծրագրերի առանձին դասընթացներին, հնարավորություն տալ մեր ուսանողներին իրենց մասնագիտական պրակտիկան անցնելու «Կոնվերս Բանկ» ընկերությունում:

ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Հրաչյա Ասցատրյանի հետ ստորագրել ենք երկու կառույցների միջև համագործակցության հուշագիր, որի համաձայն՝ միավորելու ենք ջանքերն ու ռեսուրսները երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, կատարելու ենք գիտահետազոտական համատեղ աշխատանքներ, տարբեր ծրագրեր ու նախագծեր, խթանելու ենք համագործակցությունը պրոֆեսորադասախոսական կազմի, գիտաշխատողների և ուսանողների միջև, գործակցային կապեր ենք հաստատելու համակարգչային գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում՝ դասախոսական համակազմի վերապատրաստման, ուսանողների պրակտիկայի կազմակերպման, ուսումնական նյութերի կատարելագործման ու դասավանդման ժամանակակից մեթոդների ներդրման համար:

Համագործակցության արդյունքում ակնկալվում է ստեղծել գիտաուսումնական համատեղ լաբորատորիա, որը կկատարի տեղեկատվական տեխնոլոգիաների

ոլորտում գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքներ, այդ թվում՝ ուսանողների պրակտիկայի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ:

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան»-ի տնօրեն Ալեքսանդր Մանուչարյանի հետ ստորագրել ենք փոխըմբռնման հուշագիր՝ կազմակերպելու ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր ու զարգացնելու նրանց մասնագիտական ու մանկավարժական կարողությունները:

Հաստատված համագործակցության արդյունքում կիրականացնենք լավագույն փորձի փոխանակում՝ նպաստելով երկու կառույցների զարգացմանն ու առաջընթացին:

«Լիդիան Արմենիա» ընկերության գործադիր տնօրեն Հայկ Ալոյանի հետ ստորագրել ենք մտադրությունների հուշագիր: Համագործակցությամբ միավորելու ենք մեր ջանքերը երկրաբանության, հանքարդյունաբերության, հանքավայրերի շահագործման, լեռնամետալուրգիական, հիդրոերկրաբանության և այլ ոլորտներում որակյալ մասնագետներ պատրաստելու, գիտահետազոտական համատեղ աշխատանքներ ու կրթագիտական այլ ծրագրեր իրականացնելու համար:

Ոլորտները, որոնց զարգացման նպատակով հաստատվել է համագործակցություն, կարևոր են մեր երկրի համար, ուստի որակյալ կրթության տրամադրումն ու

արհեստավարժ կադրերի պատրաստումը, հիմնախնդիրների վերհանումն ու դրանց լուծումը պետք է առաջնահերթություն լինեն, իսկ որակյալ և ներկայիս պահանջներին ու չափանիշներին համապատասխան կրթություն տրամադրելու երաշխիքներից մեկը հենց աշխատաշուկայի հետ արդյունավետ կապն է:

Երևանի պետական համալսարանի, *Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա»* ընկերության միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր՝ համատեղ նախաձեռնությամբ մեկնարկելու Սոցիալական ձեռներեցության ինկուբացիոն ծրագիրը:

Այն մշակվել է ԵՊՀ-ի և ՁԻՀ-ի կողմից համատեղ և նպատակ ունի աջակցելու սոցիալական որևէ խնդիր լուծող նորարական գաղափարների իրականացմանը՝ օգնելով ձեռներեցներին սաղմնային փուլում գտնվող գաղափարը կյանքի կոչել և գաղափարից անցում կատարել դեպի ձեռնարկություն:

Երկու կառույցները տրամադրում են ԵՊՀ բիզնես ինկուբատորի կողմից ընտրված ստարտափներին անհրաժեշտ ռեսուրսներ, մենթորություն և խորհրդատվական աջակցություն՝ ուժեղացնելու նրանց կարողությունները ինչպես բիզնեսի զարգացման, այնպես էլ սոցիալական ազդեցության նախաձեռնություններում, իսկ «Ցե-Կվադրատ Ամպեգան» խրախուսում է այդ ստարտափների և վաղ փուլի գաղափարների զարգացմանը՝ ուղղված սոցիալական կարևորագույն խնդիրների լուծմանը:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային այցով ԵՊՀ արաբագիտության ամբիոնի վարիչ Հայկ Քոչարյանի և նույն ամբիոնի ասիստենտ Նաիրա Սահակյանի հետ եղել ենք Ինդոնեզիայի Հանրապետությունում, որտեղ մասնակցել ենք «Իսլամը և քրիստոնեությունը Եվրոպայում և Հարավարևելյան Ասիայում. Հայաստանի և Ինդոնեզիայի դեպքերը» խորագրով միջազգային գիտաժողովին: Միջոցառմանը, որին մասնակցել են ինչպես գիտական, այնպես էլ դիվանագիտական ու հասարակական հանրույթի ներկայացուցիչներ, Ինդոնեզիայի Հանրապետությունում ՀՀ դեսպան Սերոբ Բեջանյանի հետ հանդես եմ եկել բացման խոսքով, իսկ գործընկերներս՝ մասնագիտական զեկուցումներով:

Այցի շրջանակում *Ինդոնեզիայի միջազգային իսլամական համալսարանի* և ԵՊՀ-ի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ հաստատելու փոխգործակցային հարաբերություններ և իրագործելու համատեղ բազմաբնույթ ծրագրեր: Աշխատանքային այցի շրջանակում ունեցել ենք հանդիպումներ տարբեր ոլորտների գործիչների հետ՝ քննարկելու և ընդլայնելու հայ-ինդոնեզական կրթագիտական հարաբերությունները:

ԵՊՀ-ի և Էգեյան համալսարանի ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ խթանելու երկու կառույցների փոխգործակցությունը կրթության ու գիտության ոլորտներում, նպաստելու փոխանակման ծրագրերի իրագործմանը և համատեղ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում հետազոտական նախագծերի իրականացմանը: Քննարկման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել երկկողմ համագործակցությունը մեկնարկել երկու համալսարանների սոցիոլոգիայի ֆակուլտետների միջև փոխգործակցությամբ:

Հիմք ընդունելով կրթական ու գիտահետազոտական համատեղ լրացուցիչ ծրագրերի և նախագծերի իրականացման անհրաժեշտությունը՝ *«Ֆասթեքս»-ի* հիմնադիր Վիգեն Բադալյանի հետ ստորագրել ենք համագործակցության հուշագիր՝ խթանելու բլոքչեյնի և թվային արժույթների ոլորտի զարգացումը:

Համագործակցության արդյունքում «Ֆասթեքս»-ն աջակցում է ԵՊՀ ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնում ստեղծվող «Բլոքչեյն և թվային արժույթներ» մագիստրոսական ծրագրի մշակմանը: Բացի դրանից՝ ընկերության կողմից ընտրված մասնագետներն անցկացրել են «Բլոքչեյն և վիրտուալ ակտիվներ» թեմայով կարճաժամկետ դասընթացներ:

Այս համագործակցությունը մեր ուսանողներին հնարավորություն է ընձեռում պարբերաբար անցնելու մասնագիտական պրակտիկա «Ֆասթեքսում», իսկ մագիստրոսական ծրագրում լավագույն առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ստանալու ընկերության կողմից հատկացված անվանական կրթաթոշակ:

Նպատակ ունենալով համատեղ ուժերով նպաստելու գիտական ու կրթական ոլորտների զարգացմանը, ինչպես նաև երիտասարդ մասնագետների և ուսանողների համար ստեղծելու տեսական ու գործնական գիտելիքների ամրապնդման և խորացման հնարավորություններ՝ *ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի* տնօրեն Արսեն Գասպարյանի հետ ստորագրել ենք երկու կառույցների միջև համագործակցության համաձայնագիր:

Համագործակցության համաձայնագիրը հնարավորություն կընձեռի ԵՊՀ ուսանողների պրակտիկան անցկացնելու Բուսաբանության ինստիտուտում, կազմակերպելու համատեղ դասախոսություններ, իրականացնելու գիտահետազոտական և աշխատանքային այլ ծրագրեր, անցկացնելու գիտական սեմինարներ, գիտաժողովներ, աշխատարաններ ու այլ միջոցառումներ:

«Ամարյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Ալեքսանդր Խաչատուրյանի հետ էլ ստորագրել ենք նվիրաբերության պայմանագիր, որով Հիմնադրամը ֆինանսավորում է ԵՊՀ տարածքում նոր հուշ-պուրակի կառուցումը:

Այն նպատակ ունի ոչ միայն հարգանքի տուրք մատուցելու և ոգեկոչելու նահատակված հերոսների հիշատակը, այլև ստեղծելու մտորումների ու ոգեշնչման վայր ներկա ու գալիք սերունդների համար:

«BostonGene»-ն աշխարհահռչակ միջազգային կազմակերպություն է, որը նպատակ ունի նոր և անհատականացված բուժման մեթոդներով ապահովելու դրական արդյունք քաղցկեղ ունեցող մարդկանց համար՝ կիրառելով գենոմային և տրանսկրիպտոմային վերլուծությունների արդյունքները: ԵՊՀ-ի և ընկերության միջև հաշվետու ժամանակահատվածում հաստատված համագործակցության արդյունքում մշակվել են դասընթացներ մեր ուսանողների համար, որի ավարտին լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցներն անցնելու են աշխատանքի «BostonGene»-ում:

Կարևորելով գործընկերության և համագործակցության դերն ուսանողների կրթության և մասնագիտացման գործում՝ *«Ucom»* ընկերության տնօրեն Ռալֆ Յիրիկյանի հետ ստորագրել ենք համագործակցության հուշագիր, որով ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներում ներգրավվելու են նաև «Ucom» ընկերության փորձառու աշխատակիցները:

Բացի դրանից՝ ընկերությունը կազմակերպելու է ԵՊՀ ուսանողների պրակտիկան: Համագործակցության շրջանակում համատեղ կազմակերպվելու և անցկացվելու են բաց դասեր, սեմինարներ ու քննարկումներ: Ընկերությունը, ըստ նպատակահարմարության և իր հայեցողությամբ, թեստավորման և հարցազրույցների արդյունքում լավագույն ուսանողներին ապահովելու է աշխատանքով:

Աշխատանքային այցով հաշվետու ժամանակահատվածում եղել եմ Չեխիայի Հանրապետությունում, որտեղ *Կարլի համալսարանի* ռեկտոր Միլենա Կրալիչկովայի հետ երկու համալսարանների միջև առկա համագործակցության հուշագրի շրջանակում ստորագրել ենք ուսանողների փոխանակման պայմանագիր՝ ամրապնդելու առկա փոխգործակցությունն ու ընդլայնելու հնարավորությունների շրջանակը:

Երկու համալսարանների միջև առկա համագործակցության հիմնական նպատակը գիտական և կրթական ոլորտներում ընդհանուր ջանքերի համատեղումն է՝ նպաստելով երկու համալսարանների ուսանողների և դասախոսների մասնագիտական աճին ու զարգացմանը:

Ստորագրված նոր պայմանագրի արդյունքում մեկ ուսումնական տարում յուրաքանչյուր համալսարանի առնվազն 4 ուսանող հնարավորություն կստանա փոխանակման ծրագրերով իր ուսումնառությունը կազմակերպելու գործընկեր բուհում: Համագործակցության այսպիսի ընդլայնումը կնպաստի երկու համալսարանների միջև փոխըմբռնման խորացմանը, երկարատև գործընկերության ձևավորմանը, գիտելիքի և փորձի փոխանակմանն ու կրթության որակի բարձրացմանը:

Աշխատանքային այցի շրջանակում հանդիպում եմ ունեցել *Վարշավայի տնտեսագիտության համալսարանի* ռեկտոր Պյոտր Վախովիակի հետ և քննարկել երկու համալսարանների միջև համագործակցության հաստատման և ընդլայնման քայլերը:

Առավել մանրամասն անդրադարձել ենք տնտեսագիտության ոլորտում համագործակցության հնարավորություններին, ինչպես նաև բիզնես ինկուբատորների փոխգործակցությանն ու զարգացման առանձնահատկություններին: Մեր նպատակն է ստեղծել միջհամալսարանական համագործակցության հարթակ, որը հնարավորություն կտա ուսանողներին և հետազոտողներին մասնակցելու համատեղ ծրագրերի, փոխանակելու գիտելիքներ ու նորարարական գաղափարներ:

Այս համագործակցությունը կբարձրացնի երկու համալսարանների գիտահետազոտական գործունեության մակարդակը, կնպաստի կրթության որակի բարելավմանն ու կնպաստի մեր շրջանավարտների հաջող կարիերայի ձևավորմանը:

Լեհաստան կատարած աշխատանքային այցի շրջանակում մասնակցել և զեկուցմամբ հանդես եմ եկել *Լեհաստանի ակադեմիական համալսարանների ռեկտորների համաժողովին*, որի հիմնական նպատակն է նպաստել բարձրագույն կրթության և գիտության զարգացմանը Լեհաստանում, աջակցել անդամ համալսարաններին և ներկայացնել նրանց շահերը պետական ու միջազգային մակարդակներում:

Զեկուցման ժամանակ խոսել եմ Հայաստանի բարձրագույն կրթության և գիտության հիմնախնդիրների ու մարտահրավերների մասին, անդրադարձել ԵՊՀ

գործունեությանը, ներկայումս իրականացվող ծրագրերին ու գրանցած առաջընթացին:

Ելույթի ընթացքում հիմնականում խոսել եմ բիզնեսի ու բարձրագույն կրթության կապի վերաբերյալ՝ նշելով, որ համագործակցությունը կարևոր և շահավետ է երկու կողմերի համար: Քննարկել ենք նաև բիզնեսում արհեստական բանականության կիրառությանը, և թե ինչպես նորագույն տեխնոլոգիաները կարող են նպաստել կրթության ու տնտեսության զարգացմանը:

Այս միջոցառումը հրաշալի հնարավորություն էր ծանոթանալու Լեհաստանի բարձրագույն կրթության և գիտության ոլորտներին, տեսնելու, թե ինչպես են մեր գործընկեր համալսարանները մոտենում իրենց խնդիրներին, համատեղ աշխատելու և փորձի փոխանակում իրականացնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում Երևանի պետական համալսարանը, *ՀՀ գլխավոր դատախազությունը և «Հայ իրավաբանական միություն» կազմակերպությունը* ստորագրել են մտադրությունների վերաբերյալ հայտարարություն՝ նպաստելու իրավաբանական կրթության և պրակտիկայի արդիականացման ու կատարելագործման ոլորտում փոխշահավետ համագործակցության ամրապնդմանը, ինչպես նաև զարգացնելու ժամանակակից իրավաբանական կրթությունը Հայաստանում:

Այս համագործակցությունը խթանելու է ՀՀ գլխավոր դատախազությունում արտադրական պրակտիկա անցնող ուսանողների, փորձաշրջան անցնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, գործող դատախազների իրավաբանական գիտելիքների և պրակտիկ հմտությունների՝ միջազգային և ներպետական իրավունքի արդի զարգացումներին համահունչ արդիականացումն ու կատարելագործումը:

Փոխգործակցության շրջանակում պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ գլխավոր դատախազության վարչական շենքում հիմնադրելու իրավաբանական լաբորատորիա, որտեղ կկազմակերպվեն համատեղ մասնագիտական քննարկումներ, գործնական աշխատանքներ, սեմինարներ ու գիտաժողովներ, կիրականացվեն մասնագիտական հետազոտական աշխատանքներ, նախագծեր ու մի շարք այլ ծրագրեր:

«Գեո-Նալ» ընկերության տնօրեն Աննա Նալջյանի հետ ստորագրել ենք երկու կառույցների միջև փոխըմբռնման հուշագիր՝ համատեղ ուժերով նպաստելու

կրթության ոլորտի զարգացմանը, երիտասարդ մասնագետների համար ստեղծելու տեսական և գործնական գիտելիքների ամրապնդման ու խորացման հնարավորություններ, ինչպես նաև նպաստելու բուհ-աշխատաշուկա կապերի ամրապնդմանը և կատարելագործմանը: «Գեո-Նալ» ընկերությունը «Լեյկա Գեոսիստեմս» («Leica Geosystems») և «Լեյկա Միկրոսիստեմս» («Leica Microsystems») ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչն է Հայաստանում: «Լեյկա Գեոսիստեմս» ընկերությունն առաջարկում է լավագույն գեոդեզիական լուծումներ, չափագրում, լազերային սկանավորում, իսկ «Լեյկա Միկրոսիստեմս»-ը՝ օպտիկական, թվային և լազերային մանրադիտակներ:

Համագործակցության արդյունքում իրականացվելու են կրթական և ճանաչողական ծրագրեր, կատարվելու է փորձի փոխանակում, և անցկացվելու են դասընթացներ: Գործակցության շրջանակում կատարվելու են գեոդեզիայի, տեղագրական, կադաստրային քարտեզագրման, օդալուսանկարահանման, եռաչափ արտապատկերման, երկրատեղեկատվական համակարգերի կիրառման, մետաղների, բյուրեղների, օպտիկական միջավայրերի ուսումնասիրություն, հյուսվածքների և բջիջների կենսաբանական հետազոտություն՝ կիրառելով նորագույն տեխնոլոգիաները: Բացի դրանից՝ ընկերությունն ուսանողների համար կազմակերպելու է կրթական ծրագրեր, պրակտիկա, իրազեկման հանդիպումներ և այլ միջոցառումներ, ԵՊՀ-ն էլ ընկերության աշխատակիցների համար կազմակերպելու և անցկացնելու է ոլորտին առնչվող դասընթացներ:

ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բարելավում» ծրագրի շրջանակում Երևանի պետական համալսարանի և *«Դելոյթ Քոնսալթինգ Էլ-Էլ-Փի» ընկերության* միջև ստորագրվել է համագործակցության նամակ: Հաստատված համագործակցության նպատակն է խթանել կրթության ոլորտում ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ նորարարությունը, գիտելիքների փոխանակումը, միջազգային լավագույն փորձի կիրառումը՝ այդպիսով նպաստելով ապագայում ազգային և տեղական մակարդակներում ներգրավված ոլորտային մասնագետների և որոշում կայացնողների կարողությունների բարձրացմանն ու ոլորտի կայուն զարգացմանը:

Համագործակցության շրջանակում ծրագիրը նախատեսում է աջակցել թիրախային ոլորտներում պետական ու ակադեմիական կառույցների միջև ինստիտուցիոնալ համագործակցության կապերի ամրապնդմանը, կիսվել ծրագրի շրջանակում իրականացված հետազոտություններով, լավագույն միջազգային փորձով, հնարավորություն ընձեռել ԵՊՀ ուսանողներին և երիտասարդ մասնագետներին ներգրավվելու Կոլորադոյի Բոլդեր համալսարանում առցանց ավարտական հավաստագրման ծրագրին և անցնելու գործնական պրակտիկա ծրագրի ընթացքում իրականացվող աշխատանքների շրջանակում:

Բացի դրանից՝ ԵՊՀ մասնագետներն ու ուսանողները կներգրավվեն ջրային ոլորտի հայեցակարգերի, ռազմավարությունների և այլ ծրագրային ու իրավական փաստաթղթերի մշակման գործընթացներում:

«Ինստրուկտարիում» ընկերության գլխավոր տնօրեն Ծովինար Բիլյանի հետ կարևորելով երկու կառույցների ներուժի միջոցով համատեղ ուսումնական ու գիտահետազոտական ծրագրերի և նախագծերի իրականացման անհրաժեշտությունը՝ ստորագրել ենք համագործակցության համաձայնագիր, որով ԵՊՀ-ն և «Ինստրուկտարիում» ընկերությունը միավորելու են իրենց ջանքերը քիմիայի, սննդի անվտանգության, լաբորատոր գործունեության, ստանդարտացման, արդյունաբերական անվտանգության և այլ ոլորտներում գիտահետազոտական

աշխատանքներ կատարելու, համատեղ մագիստրոսական և բակալավրիատական կրթական ծրագրերի իրականացման համար:

Սահմանված նպատակներին հասնելու համար կողմերը պատրաստակամ են ներդնելու ուսումնալաբորատոր, գիտաարտադրական ու ուսումնամեթոդական բազաներ, լաբորատորիաներ, մարդկային ռեսուրսներ, մասնագիտական գիտելիքներ, ունակություններ և հմտություններ:

Համաձայնագրի շրջանակում ընկերությունը վերապատրաստման դասընթացներ է կազմակերպելու ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի համակազմի և սովորողների համար «Աշխատողների անվտանգության ապահովում և առողջության պահպանություն, անվտանգության պահանջները քիմիական լաբորատորիաներում, հրդեհային անվտանգություն, առաջին մինչբժշկական օգնություն» թեմաներով:

Բացի դրանից՝ համատեղ իրականացվելու են ծրագրեր՝ միտված ուսանողների մասնագիտական գիտելիքների, գործնական և լաբորատոր հմտությունների ու կարողությունների զարգացմանը, ինչպես նաև կազմակերպվելու են պրակտիկաներ, գործնական և լաբորատոր պարապմունքներ:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Կառլեն Խաչատրյանի և *ԱՊՀ երկրներում «Kotler Impact» ընկերության բացառիկ ներկայացուցիչ «AWE Consulting» ՍՊԸ-ի* տարածաշրջանի տնօրեն Մերի Գրիգորյանի հետ էլ ստորագրել ենք համագործակցության հուշագիր, որի նպատակն է կողմերի միջև հաստատել գործընկերային հարաբերություններ և իրականացնել համատեղ մի շարք ծրագրեր: Համագործակցության արդյունքում կհրատարակվի «Ժամանակակից մարքեթինգի հիմունքները. Հայաստանի հրատարակություն» գիրքը: Համագործակցությունը կօգնի ուսանողների համար մարքեթինգային տարբեր միջոցառումներին մասնակցելու հնարավորություններ ստեղծելու տեսանկյունից:

Գիտահետազոտական համատեղ նախագծերի իրականացման, ակադեմիական և գիտական միջոցառումների կազմակերպման, սովորողների, դասախոսների ու հետազոտողների փոխանակման ծրագրերի իրագործման նպատակով էլ համագործակցության հուշագիր է ստորագրվել ԵՊՀ-ի և *Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի* միջև:

Կարևորելով Հայաստանի տնտեսության երկարաժամկետ զարգացման գործում հանքարդյունաբերության ոլորտի, ընդերքի ռացիոնալ ու համալիր օգտագործման դերակատարությունը, ինչպես նաև այդ ուղղությամբ տարվող երկրաբանական ուսումնասիրությունների բնագավառում Երևանի պետական համալսարանի կուտակած հարուստ փորձի փոխանցումն ու պոտենցիալի ներդրումը՝ Երևանի պետական համալսարանը միացել է Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության գործունեությանը՝ դառնալով միության անդամ:

ԵՊՀ և ՀՀ-ում Սիրիայի Արաբական Հանրապետության դեսպանության համագործակցությամբ, ինչպես նաև Գաբրիել Ջեմբերջյանի աջակցությամբ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում բացվել է Սիրիայի Արաբական Հանրապետության լսարանը:

Համագործակցության և նորարարական մոտեցումների միջոցով կարելի է հասնել ակադեմիական առաջընթացի: Համալսարանը կշարունակի իր ջանքերը՝ ի նպաստ գիտելիքի տարածման, հետազոտությունների խթանման և հասարակության հետ արդյունավետ փոխգործակցության հաստատման՝ հավատարիմ մնալով իր արժեքներին և ռազմավարական նպատակներին:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԵՊՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ն ռազմավարական պլանավորման կենտրոնի համակարգմամբ նախաձեռնել է նոր ռազմավարության մշակման գործընթաց:

ԵՊՀ ռազմավարական և օպերացիոն պլանավորման գործընթացը հաշվետու ժամանակահատվածում ենթարկվել է զգալի փոփոխությունների: Ռազմավարական պլանավորման կենտրոնի կողմից մշակվել և համալսարանական ստորաբաժանումների հետ հաղորդակցվել են ձևաչափեր, որոնց միջոցով հնարավոր են դարձել կարիքների արդյունավետ գնահատման իրականացումը և ռեսուրսների արդյունավետ բաշխումը: Այս ձևաչափերը նաև որոշակի խթան են հանդիսացել ներքին հաղորդակցության զարգացման և ստորաբաժանումների գործառնական և բովանդակային համագործակցության հիմքերի ամրապնդման համար:

Զարգացման ռազմավարական ծրագրի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոններով, որոնք էականորեն ազդել են գիտակրթական միջավայրի վրա: Արտաքին գործոնները, այդ թվում՝ քաղաքական, տնտեսական և անվտանգային համաշխարհային իրադարձությունները, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների առաջընթացը, ստեղծել են նոր մարտահրավերներ, որոնք պահանջում են համալսարանի ճկունություն և պատրաստակամություն՝ հարմարվելու և առաջ շարժվելու համաշխարհային զարգացումներին զուգընթաց: Ներքին գործոններից հատկապես կարևոր է գործող ռազմավարական ծրագրի կատարողականը, որը ցույց է տալիս ԵՊՀ շարունակական զարգացման և բարելավման հստակ ուղենիշներ:

Այսպիսով, ԵՊՀ-ն, որպես երկրի առաջատար գիտակրթական հաստատություն, ունի պատասխանատվություն՝ իր գործունեությունը հարմարեցնելու նոր, փոփոխվող պայմաններին՝ ապահովելով կրթության, գիտության և տեխնոլոգիաների արդյունավետ զարգացում: Նոր ռազմավարության մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ 2020-2024 թթ. ընթացքում

իրականացված գործողություններն ու ծրագրերը, հաճախ հանդիսանալով փոփոխված իրավիճակին արձագանք, դուրս էին գործող ռազմավարությամբ սահմանված թիրախների ու առաջնահերթությունների շրջանակից և առաջացնում էին հաշվետվողականության լրացուցիչ գործիքների անհրաժեշտություն:

Ռազմավարության մշակման հիմքում ընկած են եղել մի շարք բազային սկզբունքներ, որոնց շնորհիվ ակնկալվում է ունենալ իրական կարիքներին արձագանքող և բավարար չափելիություն պարունակող փաստաթուղթ: Այս սկզբունքներից ամենաառանցքայինները մասնակցայինությունն ու տվյալահենությունն են: Ուստի, ռազմավարության մշակման ընթացքում իրականացվել է ինչպես համապարփակ տվյալների վերլուծություն, այնպես էլ մշակվել և գործարկվել են ձևաչափեր, որոնց միջոցով հնարավոր է դարձել ներգրավել և՛ ներքին, և՛ արտաքին շահառուներին:

ԹՎԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ փոխվել է ԵՊՀ պաշտոնական կայքը՝ ստանալով նոր տեսք և համալրվելով նոր բաժիններով: Կայքի այցելուների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է՝ 6.745.689 այցելությունից հասնելով 13.934.992-ի (ըստ «Google Analytics» վիճակագրական գործիքի), որոնցից 12.129.200 այցելությունները Հայաստանից են, մնացած 1.805.792-ը՝ արտերկրից:



ԵՊՀ պաշտոնական www.ysu.am եռալեզու կայքէջի զարգացման շրջանակում պարբերաբար կատարվել են կայքէջի ուսումնասիրություններ, խնդիրների արձանագրում, հասցեագրում համապատասխան ստորաբաժանումներին, որոնց արդյունքում արձանագրվել են տեխնիկական բարելավումներ, մասնավորապես՝ բարելավվել է կայքէջում աշխատելու գործիքակազմը: Աշխատանքներ են կատարվել նաև համալսարանի կայքէջի, ինչպես նաև սոցիալական մեդիայի (Facebook, Instagram, Linkedin, Youtube) հրապարակումները բովանդակային առումով

բազմազան և նպատակային դարձնելու ուղղությամբ: Մոնետիզացվել է Youtube -ի էջը:



Ներքին հաղորդակցության ապահովմանն ուղղված աշխատանքներից առանձնանշելի են նաև տարվա ընթացքում Մարքեթինգի բաժնի marketing@ysu.am էլհասցեից համալսարանական համայնքին (ուսանողներ, աշխատակիցներ) ուղարկված մարքեթինգային նամակները՝ «Email-մարքեթինգը», որոնց միջոցով բաժինը համալսարանական համայնքին տեղեկացրել է կրթական նոր ծրագրերի, միջբուհական համագործակցությունների և այլ ծրագրերի, համալսարանի կողմից ուսանողներին, դասախոսներին ընձեռվող հնարավորությունների, սպասվող իրադարձությունների, բուհի առաջարկած տարբեր ծառայությունների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:

Գործարկվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ ամբողջությամբ նոր գործիքներով վերազինված կայքը, ինչի արդյունքում մասնաճյուղն առավել արդյունավետորեն է ներկայանում այցելուներին, ինչպես նաև ավելի հարմարավետ բովանդակության հասանելիության տեսանկյունից:

Շարունակական աշխատանքներ են տարվել աշխատակիցների գիտական աշխատանքների մուտքագրման համակարգի՝ «intranet.ysu.am»-ի կատարելագործման ուղղությամբ:

Ստեղծվել է «rest-api.ysu.am» միասնական տեղեկատվական «API» համակարգ, որտեղից հասանելի են ԵՊՀ կառուցվածքի, աշխատակիցների, գիտական աշխատությունների վերաբերյալ և այլ տեղեկատվություն: Այն ընձեռում է նոր տեղեկատվական համակարգերի հեշտ և արագ մշակման, ստեղծման և ԵՊՀ-ում ինտեգրման հնարավորություն:

Պարբերաբար թարմացվել են ԵՊՀ-ում գործող տեղեկատվական և օպերացիոն համակարգերը («OJS», «gitlab», «web servers» և այլն), մեծ ուշադրություն է դարձվել համակարգերի խոցելիության և անվտանգության հարցերին:

Ընթացիկ տարում «KOHA» համակարգը ներառվել է նաև մշտադիտարկման համակարգում, ինչը թույլ է տալիս արագ արձագանքել հնարավոր խնդիրներին: Մասնավորապես, խնդիրը հայտնաբերելու և համակարգի աշխատունակությունը վերականգնելու նախկին 1 ժամն այժմ տևում է 15 րոպե է:

Ապահովելով թափանցիկության սկզբունքը՝ շարունակական աշխատանք է իրականացվում «ԵՊՀ փաստաթղթեր» (http://doc.ysu.am) կայքում. տեղադրվում են ոչ միայն կանոնադրությունները, կանոնակարգերը, ընթացակարգերը, ծրագրերը, հրամանները, հաշվետվությունները, ֆինանսական փաստաթղթերը, այլև ներկայացվում են կոլեգիալ մարմինների (ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդ, ԵՊՀ գիտական խորհուրդ, ֆակուլտետների և բուհում գործող այլ ստորաբաժանումների գիտական խորհուրդներ) նիստերի արձանագրություններն ու որոշումները:

Հաշվետու տարում շարունակվել են նոր բովանդակությամբ համալրելու և կատարելագործելու աշխատանքները նաև համեմատաբար նորաբաց կայքերում. մասնավորապես «admission.ysu.am» կայքում ավելացել է նաև ԵՊՀ ՍԹԵՄ ավագ դպրոցի ընդունելության առցանց գրանցման հարթակը:

Ընթացիկ տարում շարունակվել են ԵՊՀ ուսումնական լաբորատորիաների և լսարանների վերազինման և համակարգչային գույքով ապահովման աշխատանքները: ԵՊՀ լսարաններում, գրադարանի և այլ սրահներում տեղադրվել են առնվազն 40 ինտերակտիվ գրատախտակներ, որոնց մի մասը ապահովվել են գծային, մի մասը՝ «Wi-Fi» ինտերնետ կապով:



ԻԿՄ ֆակուլտետի համակարգչային սրահը համալրվել է 56 նոր և հզոր համակարգիչներով:

Ընդհանուր առմամբ անցկացվել է մոտ 10 հազար մետր նոր ցանցային կոմունիկացիա: Ամբողջությամբ «Wi-Fi» ինտերնետ կապի սփռմամբ ապահովվել են ԵՊՀ 5-րդ, 6-րդ և 8-րդ մասնաշենքերը: Բարելավվել են նաև ԵՊՀ հյուրատան, ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայի «Wi-Fi» ցանցերը: Ընդհանուր առմամբ տեղադրվել են 109 սոր սերնդի «Wi-Fi» սարքեր:

Հաշվետու ժամանակահատվածում ստեղծվել են մի քանի հաշվետվողական-տեղեկատվական հարթակներ, որոնք բացառապես ներքին օգտագործման համար են, սակայն պարունակում են ամբողջական տեղեկատվություն իրականացված և ընթացիկ գնումների մասին: Այս հարթակի կիրառումը հնարավորություն է տալիս որպեսների ընթացքում տեղեկատվություն ստանալու ապրանքների աշխատանքների և ծառայությունների մասին: ԵՊՀ գնումների վարչությունում փոփոխվել են փաստաթղթաշրջանառության որոշ գործընթացներ, որոնց արդյունքում վճարման ենթակա փաստաթղթերի՝ հաշվապահությանը տրամադրման գործընթացի տևողությունը կրճատվել է ավելի քան 50 %-ով:

Պետական դրամաշնորհների հետ կապված գնումների մասով ևս ստեղծվել է տեղեկատվության հավաքագրման էլեկտրոնային հարթակ, որպեսզի գիտնականները հնարավորինս քիչ ներգրավված լինեն փաստաթղթային գործընթացներում: Հարթակը փորձնական տարբերակով տրամադրվել է Ֆիզիկայի ինստիտուտի, Կենսաբանության և Քիմիայի ֆակուլտետների գործընկերներին, ստացվել են դրական արձագանքներ: Հարթակի փաստացի կիրառումը կսկսվի հաջորդ տարվա հունվարից:

Փոխարինվել են ԵՊՀ գրադարանի և կենտրոնական մասնաշենքի երկուական վերելակները:

ԵՊՀ-ում ներառական կրթություն ապահովելու և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներին աջակցելու նպատակով շարունակաբար իրականացվում են տարբեր ծրագրեր: Հավաքագրելով կարիքներն ու խնդիրները՝ արդեն իսկ իրականացվել են տարբեր միջոցառումներ:

ԵՊՀ տարբեր մասնաշենքերում տեղադրվել են էլեկտրոնային ու մեխանիկական վերելակներ, թեքահարթակներ՝ հնարավորություն տալով հաշմանդամություն ունեցող ուսանողներին ազատորեն տեղաշարժվելու և լիարժեքորեն մասնակցելու

համալսարանական կյանքին: Մասնավորապես, էլեկտրոնային վերելակներ են տեղադրվել կենտրոնական, 3-րդ և 7-րդ (տեղակայված են համապատասխանաբար Ֆիզիկայի ինստիտուտը, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետն ու Արևելագիտության, Ռուս բանասիրության, Ժուռնալիստիկայի, Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետները) մասնաշենքերում, իսկ ներսում տեղադրվել են թեքահարթակներ: Առաջիկայում մեխանիկական վերելակ կտեղադրվի նաև 5-րդ մասնաշենքում (Կենսաբանության ֆակուլտետ): Նաև կարվեն հստակ գծանշումներ ու անհրաժեշտ կահավորում:

Հերթական այս ներդրումը ոչ միայն տեխնիկական լուծում է, այլև արտահայտում է ներառական կրթություն ապահովելու մեր առաքելությունը: Բոլորի համար կրթական հավասար հնարավորություններ ընձեռելուն ուղղված մեր քայլերը շարունակական են լինելու:

ԵՊՀ հյուրերի տան նոր կառուցված և նորոգված չորս սենյակներն ապահովվել են անհրաժեշտ գույքով: Իրականացվել են ավելի քան 4000 անվանում գույքի դուրսգրում, որոնց զգալի մասը կուտակված է եղել ավելի քանի 40 տարի:

Իրականացվել են Աբովյան 52 հասցեում գտնվող ԵՊՀ մասնաշենքի արտաքին լուսավորության աշխատանքները: Կազմվել են նախագծեր ԵՊՀ գրադարանի մասնաշենքի, ԵՊՀ 5-րդ մասնաշենքի և Չարենցի փողոցին հարող այգու լուսավորության կարգավորման ուղղությամբ:

Իրականացվել են ԵՊՀ լաբորատորիաների, գրադարանային հատվածի, որոշ ֆակուլտետների նկուղային հատվածների հակահրդեհային անվտանգության համակարգերի ներդրման աշխատանքները՝ համաձայն հաստատված նախագծի:

ԵՊՀ գրադարանից պահեստն ամբողջությամբ տեղափոխվել է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի դիմային մաս: Տարածքը երկար տարիներ եղել է ոչ պիտանի օգտագործման համար, առկա աղբն ամբողջությամբ դուրս է բերվել ԵՊՀ-ից, տարածքը վերանորոգվել է:

ԵՊՀ գույքի դուրսգրման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար ավտոկայանատեղիի տարածքում կառուցվել է նոր պահեստային տարածք, որտեղ մինչև վաճառք իրականացնելը կուտակվում է դուրս գրված գույքը:

Առաջիկայում խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է եկող տարվա ընթացքում լուծել մասնաշենքերի էլեկտրամատակարարման հզորությունների

ապահովման խնդիրը, ապա նոր միայն մատակարարել էլեկտրական նոր տեխնիկական միջոցներ: Նման գործընթաց իրականացվել է ԵՊՀ 6-րդ մասնաշենքում, անցկացվում է առանձին էլեկտրականության գիծ, որը հնարավորություն կտա օգտագործելու ավելի մեծ ծավալով էլեկտրական ապրանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ հյուրերի տան կողմից մատուցվել են ընդհանուր 42 մլն 119 հազար 800 դրամի ծառայություններ, ինչը նախորդ տարվա համեմատ ավելի է 20 %-ով, իսկ 2018 թվականի համեմատ՝ ավելի 400 %-ով:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ հանրակացարանի կողմից մատուցվել են ընդհանուր 88 մլն 604 հազար 630 դրամի ծառայություններ, ինչը 2021 թվականի համեմատ ավելի է 100 %-ով: Ծառայությունները մատուցվել են ինչպես ՀՀ քաղաքացի հանդիսացող ուսանողներին, այնպես էլ օտարերկրացիներին: ԵՊՀ հանրակացարանի տեղերի քանակը չի համապատասխանում առկա պահանջարկի նույնիսկ 30 տոկոսին: Ամեն տարի ստացված դիմումների քանակը էականորեն գերազանցում է հնարավոր տեղերի քանակին, և ուսանողները հաճախ զրկվում են հանրակացարանում բնակվելու հնարավորությունից, ինչի պատճառով ստիպված են լինում ավելի բարձր գնով բնակարաններ փնտրել այլ վայրերում: Վերջին երկու տարիների ստացված դիմումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ստացվում է ավելի քան 600 դիմում, որոնցից, սակայն, բավարարվում է ոչ ավելին, քան 220-ը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նաև ԵՊՀ գրասենյակների կահույքի պատրաստման աշխատանքների պայմանով մրցույթ, որի արդյունքում հնարավոր կլինի բոլոր նոր նորոգված գրասենյակներն ապահովել միանման կահույքով:

Նոյեմբերի 17-ին ԵՊՀ 1-ին մասնաշենքում տեղի ունեցած պայթյունն իր հերթին ստիպել է ավելի խորը անդրադառնալ անվտանգային խնդիրներին: Մինչ այդ էլ քայլեր էին ձեռնարկվում այս ուղղությամբ, սակայն այդ դեպքը դարձավ շրջադարձային կետ՝ նոր մոտեցումներ ու լուծումներ ներդնելու համար: Անվտանգության համակարգի ամբողջական վերանայումը ընդգրկել է ոչ միայն միջադեպի հետևանքների վերացումը, այլև համակարգված ռազմավարությունների մշակումը՝ ապահովելու համալսարանի յուրաքանչյուր անդամի անվտանգությունն ու հանգստությունը:



ԵՊՀ-ում ստեղծվել է մարզասրահ՝ հագեցած ժամանակակից սարքավորումներով: ԵՊՀ աշխատակիցների և սովորողների համար բոլոր ծառայությունների դեպքում գործում է 50 % զեղչ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Հաշվետու տարում Մարքեթինգի բաժինն ապահովել է ԵՊՀ տեսողական ինքնության պահպանումը. կատարել է ԵՊՀ բրենդային ապրանքների նախագծման, դիզայներական աշխատանքները, հետևել տպագրական աշխատանքների որակին՝ մշտական կապ պահելով ապրանքների մատակարարների հետ: Կատարել է բուկլետների, ազդագրերի, հավաստագրերի, շնորհակալագրերի, սոցիալական էջերի համար ետնանկարների, թեմատիկ պաստառների ստեղծման աշխատանքներ: ԵՊՀ կրթական բոլոր ստորաբաժանումների համար տպագրվել են հայերենով, իսկ նոր կրթական ծրագրերի համար նաև անգլերենով բուկլետներ: Ըստ անհրաժեշտության՝ ստեղծվել են QR կոդեր, «Google Forms»-ի առցանց ձևաթղթեր, համալսարանների էկրանների համար սահիկաշարեր, նամակների բովանդակություն:

Համալսարանի հեղինակության բարձրացման գործում կարևորելով ԵՊՀ բրենդի զարգացումը և առաջխաղացումը՝ Մարքեթինգի բաժինը համալսարանի բրենդինգի և առաջխաղացման նպատակով շարունակել է կիրառել բրենդավորված նվեր-փաթեթները, որոնք նպաստել են համալսարանի ճանաչելիության բարձրացմանը: Նվեր-փաթեթներ են տրամադրվել ուսանողների, դասախոսների, հյուրերի տարբեր միջոցառումների (հանդիպումներ, գիտաժողովներ և այլն) շրջանակում: Այդ նպատակով ձեռք են բերվել մի շարք ապրանքատեսակներ, որոնց հետ կապված աշխատանքներ են տարվել մատակարարների, ապրանքատեսակի նյութի, հումքի ընտրության, ապրանքատեսակների տեխնոլոգիաները կազմելու հետ կապված և այլ անհրաժեշտ գործողություններ:

Հաշվետու ժամանակահատվածում Լ. Ղարիբջանյանի անվան պատմության թանգարանում ցուցակագրվել և նկարագրվել է շուրջ 1.800 անուն գիրք: Թանգարանի առարկաների ֆիզիկական վիճակների նկարագիրն ունենալու համար մասնագետներ են հրավիրվել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի և Հայաստանի ազգային պատկերասրահի վերականգնման բաժիններից: Նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի վերականգնման բաժնի աշխատակից Թամարա Օհանյանի հետ՝ ԵՊՀ պատմության թանգարանի հավաքածուին պատկանող 1850 թ. պատրաստված գլոբուսի վերականգնման աշխատանքների խորհրդատվության համար:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է «ԵՊՀ լավագույն ուսանող-2024» ամենամյա մրցույթը, որի նպատակը ԵՊՀ ուսանողների շրջանում բարձր առաջադիմությամբ սովորելու, հասարակական ակտիվ գործունեությամբ զբաղվելու խրախուսումն է: Մրցույթին այս տարի դիմել է 44 ուսանող: Հայտադիմումների ուսումնասիրության և մրցույթի հանձնաժողովի կողմից իրականացված հարցազրույցների հիման վրա ընտրվել են մրցույթի 14 հաղթողները, որոնք պարգևատրվել են ԵՊՀ բրոնզե մեդալով, իսկ ուսման մեջ գրանցած հաջողությունների և բարձր հասարակական ակտիվություն ցուցաբերող ևս 6 ուսանողներ արժանացել են հանձնաժողովի հատուկ անվանակարգերի:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է «Զարկ ուսանողական ճամբար-2024» ծրագիրը, որին դիմել է 325 ուսանող: Հայտադիմումների ուսումնասիրման և հարցազրույցների փուլի հիման վրա ընտրվել են ծրագրի 120 մասնակիցներն ու աշխատակազմի անդամները: Ճամբարի ընթացքում ուսանողները ունեցել են հանդիպում-քննարկումներ ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների, մշակույթի, գիտության ոլորտի ներկայացուցիչների հետ, ունեցել են դասընթացներ, քննարկումներ, սպորտային, մշակութային, ինտելեկտուալ և ժամանցային տարաբնույթ մրցույթներ և միջոցառումներ: Ծրագրի շրջանակում ուսանողները քննարկել են համալսարանում առկա ուսանողական հիմնախնդիրներ երեք հիմնական ուղղություններով՝ ուսումնական գործընթացի կազմակերպում, ուսանողների իրազեկվածություն և մոտիվացիա, ենթակառուցվածքներ և պայմաններ: Ներկայացված խնդիրները ամփոփվել են զեկույցի մեջ, որը քննարկվել է ԵՊՀ ղեկավարության և համապատասխան ստորաբաժանումների պատասխանատուների հետ՝ խնդիրները լուծելու և ուսանողների առաջարկները լսելու համատեքստում:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ում մեկնարկել է ՀՀ ուսանողական առաջին հեռուստաընկերության՝ «InnoMedia»-ի գործունեությունը: Կրթական բարեփոխումների մեր ռազմավարության համաձայն՝ այս հարթակը լինելու է ստեղծարարության, նորարարության ու տաղանդի մասին՝ հնարավորություն տալով մեր ուսանողներին ստանալու գործնական գիտելիքներ, զարգացնելու հմտությունները, իրագործելու նորարարական գաղափարներն ու բացահայտելու իրենց ներուժը հեռարձակման աշխարհում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է «ՄԱԿ մոդել» խորագրով կոնֆերանսը, որին մասնակցել են ինչպես ԵՊՀ, այնպես էլ ՀՀ այլ բուհերի ուսանողներ: Ստացված 80 հայտադիմումներից հաստատվել են 50-ը: ՄԱԿ մոդելի նպատակն է զարգացնել ուսանողների դիվանագիտական, բանակցային, վերլուծական և թիմային աշխատանքի հմտությունները՝ նրանց հնարավորություն տալով պատկերացնել, թե ինչպես են իրական ՄԱԿ-ի նիստերը իրականացվում:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից հրավիրված խոսնակների ներգրավմամբ կազմակերպվել է 39 դասընթաց, որոնց մասնակցել է գրեթե 1000 ուսանող: Բացի դրանից՝ կենտրոնի կողմից մատուցվել է ուսանողների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի զարգացման 245 խորհրդատվություն: Հաշվետու ժամանակահատվածում իրականցվել են 1602 շրջանավարտի տվյալների հավաքագրում և թվայնացում: ԵՊՀ շրջանավարտներին և ուսանողներին գործընկեր կազմակերպություններում առկա թափուր հաստիքների, կամավորական աշխատանքների, ինթերնշիփերի, ծրագրերի, դասընթացների վերաբերյալ իրազեկելու համար պատրաստվել է 660 հայտարարություն, ուղարկվել 2686 ինքնակենսագրական:

Ընդունվել և խմբագրվել են ՈՒԳԸ պարբերականում տպագրվող հոդվածները: Հատորները լույս են տեսնելու դեկտեմբերի 16-27-ն ընկած ժամանակահատվածում: Տպագրվելու է 3 հատոր, որոնցից 2-ը հումանիտար և հասարակական գիտությունների, իսկ 1-ը՝ բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների:

Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը հաշվետու ժամանակահատվածում շարունակել է զբաղվել բուհի մշակութային կյանքի, համալսարանականների շրջանում անցկացվող մշակութային միջոցառումների համակարգմամբ:

2024 թ. մայիսին անցկացվել է «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2024»-ը՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 105-ամյակին: Լայնամասշտաբ միջոցառման շրջանակում ներկայացվել են կրթական և աշխատանքային հնարավորություններ, ապահովվել է արդյունավետ հաղորդակցություն գործատուների, շրջանավարտների և ուսանողների միջև:

Համապարփակ թեմատիկ քննարկումների միջոցով վերհանվել են կրթական համակարգի ու գործատուների հետ առկա համագործակցության առանձնահատկությունները, խնդիրներն ու զարգացման հեռանկարները: Էքսպոն անցկացվել է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի ամբողջ բակային տարածքում. համալսարանի կրթական ստորաբաժանումները ներկայացրել են իրենց կրթական ծրագրերը, իսկ գործընկերները՝ ԵՊՀ ուսանողներին աշխատանքի առաջարկներ, ինչպես նաև ընդունել էքսպոյի այցելուների ինքնակենսագրականները (CV):

2024 թ. հունիսին անցկացվել է ԵՊՀ շրջանավարտների ավարտական միջոցառումը: Հանդիսավոր միջոցառմանը նախորդել, զուգորդել և հաջորդել են մի շարք կարևոր աշխատանքներ տարբեր ուղղություններով, այդ թվում՝ տարածքի քարտեզագրում, տեղորոշում, միջոցառման մասնակիցների հետ հաղորդակցություն, կազմակերպչական աշխատանքներ, ուսանողների հետ միջոցառումների փորձեր, հաղորդակցական աշխատանքներ և այլն: Այս տարի ավարտական միջոցառման հիմնական բանախոսը ԵՊՀ շրջանավարտ, «Թել-Սել» ընկերության տնօրեն Արտյոմ Ղազարյանն էր:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պատասխանատվության շրջանակում ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին հիմնական աշխատողներին վճարվել է տարեվերջյան դրամական պարգևատրում՝ նրանց հիմնական աշխատանքային պայմանագրով (անհատական իրավական ակտով) սահմանված աշխատավարձի չափով՝ բայց ոչ ավելի քան մեկ դրույքը, իսկ ամառային արձակուրդից առաջ՝ հիմնական աշխատավարձի 50 %-ի չափով:

Հաշվետու տարում ԵՊՀ հիմնական աշխատակիցների համար ձեռք է բերվել առողջության ապահովագրության փաթեթ, որն առաջարկում է լավագույն պայմանները՝ ներառելով բժշկական մի շարք ծառայությունների փոխհատուցում:

Արցախցի բռնի տեղահանված ու Հայաստան տեղափոխված մեր հայրենակիցներին առավելագույնս արդյունավետ աջակցելու նպատակով ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի առաջին հարկում գործել է տեղեկատվական կենտրոն, որտեղ ձևավորվել են կամավորական խմբեր՝ աշխատելու տարբեր ուղղություններով՝ հումանիտարից մինչև տեղեկատվական:

Մասնավորապես ձևավորվել է աշխատանքային 6 խումբ՝ կացարանների բանկ, հումանիտար աջակցություն և լոգիստիկ հարցեր, իրավական հարցեր, հոգեբանական աջակցություն, տեղեկատվական կենտրոն, փաստահավաք խումբ:

Ձևավորված համապատասխան խմբերը զբաղվել են մեր հայրենակիցների ժամանման ընթացքում անհրաժեշտ աջակցության կազմակերպման և համակարգման հարցերով:

Առանձին խմբեր էլ աշխատել են իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմամբ և դասակարգմամբ, միջազգային մամուլի և սոցիալական

հարթակների մշտադիտարկմամբ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական ագրեսիային վերաբերող փաստերի հավաքագրմամբ:

ԵՊՀ ուսանողները ներգրավվել են Վայքի, այնուհետև Փարաքարի ու Դավթաշենի հաշվառման կենտրոնների գործունեության մեջ, անցել անհրաժեշտ վերապատրաստումները, մասնակցել Երևանի ու մարզերի համապատասխան կառույցների կողմից տարվող աշխատանքներին:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ն հրամանագրել է ԼՂ-ից բռնի տեղահանված ավելի քան 800 ուսանողների՝ կազմակերպելու նրանց հետագա ուսումնառությունը և ապահովելու կրթության շարունակականությունն ու անընդհատությունը:

Ինչպես հայտնի է, ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի փոխհատուցման նպատակով կառավարությունը սահմանել էր տարբեր բուհերում տվյալ մասնագիտությունների վարձավճարների միջինացված չափով կրթաթոշակներ: ԵՊՀ մեծ թվով մասնագիտությունների դեպքում առկա է եղել տարբերություն, սակայն ֆինանսական որևէ պարտավորություն մեր ուսանողների ուսերին չթողնելու և նրանց ուսման վարձն ամբողջությամբ փոխհատուցելու համար ԵՊՀ-ն ֆոնդհայթայթման նպատակով դիմել է բարեկամներին ու գործընկեր կազմակերպություններին:

Արդյունքում հավաքագրվել է 99,156,900 ՀՀ դրամ: Գործընթացին մասնակցել են ԱՄՆ հայոց արևմտյան թեմը (38,675,000 ՀՀ դրամ), Հայաստանի բանկերի միությունը (35,000,000 ՀՀ դրամ), Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղը (21,281,900 ՀՀ դրամ) և «Արման Տերտերյան» բարեգործական հիմնադրամը (4,200,000 ՀՀ դրամ), որոնց մեկ անգամ ևս հայտնում ենք մեր շնորհակալությունն ու երախտագիտությունը:

ԼՂ-ից բռնի տեղահանված ԵՊՀ ոչ մի ուսանող ուսման վարձ չի վճարել, ավելին՝ ռոտացիայի արդյունքում 20 ուսանող այժմ սովորում է անվճար ուսուցման համակարգում:

«Ցե-Կվադրատ Ամպեգա Արմենիա» կազմակերպությունն էլ համագործակցության արդյունքում ԵՊՀ ՍԹԵՄ դպրոց ընդունված արցախցի սովորողներին ուսումնառության ողջ ընթացքում տրամադրելու է ուսման վարձի 70 %-ի չափով կրթաթոշակ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի իրավաբանական կլինիկան իրավական խնդիրներ ունեցող մեր հայրենակիցներին մատուցել է իրավաբանական անվճար ծառայություններ (բանավոր խորհրդատվություններ, անհրաժեշտ իրավական փաստաթղթերի կազմում):

Ստեղծված ճգնաժամային ծանր իրավիճակներում չափազանց կարևոր է հոգ տանել հոգեկան առողջության մասին և մասնագիտական աջակցություն ցուցաբերել դրա կարիքն ունեցողներին: ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնը, համագործակցելով մի շարք գործընկեր կազմակերպությունների հետ, մատուցել է հոգեբանական անվճար ծառայություններ արցախցի մեր հայրենակիցներին (չափահասներին և երեխաներին):

ԵՊՀ-ն, համագործակցելով պետական գերատեսչությունների հետ, իր ուսումնաարտադրական բազաները՝ որպես կեցավայր, տրամադրել է բռնի տեղահանված մեր հայրենակիցներին: Բյուրականի ուսումնաարտադրական բազայում տեղավորվել է 150, Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում՝ 200 անձ: Կեցավայրերում մեր հայրենակիցներն ապահովված են եղել սնունդով, բացի դրանից՝ նրանց համար ստեղծված են եղել սանիտարակենցաղային անհրաժեշտ բոլոր հարմարությունները, գործել է ինտերնետ կապ:

ԵՊՀ ռեսուրսներով արցախցիներին տրամադրվել է նաև հոգեբանական աջակցություն, պարբերաբար իրականացվել է բժշկական զննություն,

անհրաժեշտության դեպքում էլ մատուցվել են համապատասխան այլ ծառայություններ:

ԵՊՀ լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոնը, միանալով բռնի տեղահանված մեր հայրենակիցներին օժանդակելու ԵՊՀ նախաձեռնությանը, կազմակերպել է օտար լեզուների անվճար դասընթացներ արցախցի երեխաների համար՝ այդ դժվարին պահին նրանց կրթության շարունակականությանն օժանդակելու նպատակով:

ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի աշխատակիցներն ու կամավորական ջոկատի սաները Ծաղկաձորում գտնվող ԵՊՀ ուսումնաարտադրական բազայում, որտեղ տեղակայված են եղել արցախցի բռնի տեղահանված 150-200 ընտանիքներ, կազմակերպել են ավելի քան 60 երեխաների ժամանցը:

ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնը, «Հայաստան» Համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ (10,742,000 ՀՀ դրամ), 2024 թ. հունիս-հուլիս ամիսներին կազմակերպել է «Բնագիտական ամառային ճամբար Արցախից տեղահանված աշակերտներ համար»: Երեք տարբեր խմբերի համար ամառային ճամբարն անցկացվել է ԵՊՀ Բյուրականի ուսումնաարտադրական բազայում: Ճամբարին մասնակցել է 59 աշակերտ:

ԵՊՀ-ն ակտիվորեն ներգրավված է եղել նաև Լոռու և Տավուշի մարզերում ջրհեղեղից տուժած բնակավայրերում իրականացվող կամավորական աշխատանքներում: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մի խումբ աշխատակիցներ միացել են աղետի գոտում տուժած հայրենակիցներին օգնություն ցուցաբերելու կամավորական աշխատանքներին: Նրանց են միացել նաև ԵՊՀ աշխատակիցներ ու ուսանողներ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Երևանի պետական համալսարանի հաջողությունները արտացոլվում են մեր ուսանողների, դասախոսների և շրջանավարտների բազմաբնույթ ձեռքբերումներում: Նրանց ակադեմիական, գիտական, մշակութային և մարզական հաջողությունները ոչ միայն ամրապնդում են մեր համալսարանի դիրքը, այլև նպաստում մեր երկրի հեղինակության բարձրացմանը միջազգային հարթակներում:

ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական

կրթաթոշակների տրամադրման մրցույթի արդյունքներով ԵՊՀ 7 ուսանողներ զբաղեցրել են մրցանակային տեղեր:

2023 թ. դեկտեմբերին «ICPC» օլիմպիադայի 2024 թ. եզրափակչի ուղեգիր են նվաճել և Հարավային Կովկասի չեմպիոն հռչակվել ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանողները:

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ուսանողները Մաղտըմգուլիի անվան թուրքմենական պետական համալսարանի կազմակերպած օլիմպիադայում գրավել են ամենաբարձր հորիզոնականները՝ արժանանալով Թուրքմենստանի կրթության նախարարության հավաստագրերի: Օլիմպիադան տեղի է ունեցել 2023 թ. նոյեմբերի 14-17-ը, հեռավար ձևաչափով մասնակցել են աշխարհի 23 երկրների 76 առաջատար բուհերի 500-ից ավելի ուսանողներ: Թիմը գրավել է երկրորդ տեղը:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը ներկայացնող թիմը Նյուրնբերգյան ամենամյա հեղինակավոր դատախաղ-մրցույթում «Լավագույն գրավոր աշխատանք» անվանակարգում հաղթող է ճանաչվել, իսկ բանավոր փուլում՝ ընդգրկվել լավագույն տասնյակում: Թիմը ղեկավարել է ասպիրանտ Լուսինե Հովհաննիսյանը:

Մաթեմատիկական միջազգային ուսանողական օլիմպիադայում (International Mathematics Competition) ԵՊՀ ուսանողներն արժանացել են մեկ ոսկե ու երեք արծաթե մեդալների. թիմը ղեկավարել է ԵՊՀ «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար, ֆ.մ.գ.դ. Կարեն Քեռյանը, մարզիչների թվում են եղել ԵՊՀ դասախոս Վազգեն Միքայելյանը, ասպիրանտ Արման Բայրամյանը և ԵՊՀ շրջանավարտ Ալբերտ Գևորգյանը:

Ցյուրիխում անցկացված Քիմիայի միջազգային 55-րդ օլիմպիադայում Հայաստանի թիմը նվաճել է 1 ոսկե ու 2 բրոնզե մեդալ: Օլիմպիադայում հաղթած աշակերտներից երկուսը համալրել են ԵՊՀ ուսանողների շարքերը: Օլիմպիադայում գրանցած հաղթանակի գործում մեծ ավանդ են ունեցել ու թիմի նախապատրաստական աշխատանքները ղեկավարել ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ Արմեն Գալստյանը, ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Արտյոմ Պետրոսյանը և 2-րդ կուրսի ուսանող Հայկ Աղեկյանը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի չորս ուսանողներ մասնակցել են Թուրքմենստանի տնտեսագիտության և կառավարման պետական ինստիտուտի կազմակերպած միջազգային հեռավար օլիմպիադային: «Համաշխարհային տնտեսություն» խորագրով միջազգային օլիմպիադայի ամփոփիչ

արդյունքներով ԵՊՀ ուսանողները զբաղեցրել են առաջին և երկրորդ հորիզոնականները:

ԵՊՀ ուսանող Սամվել Պետրոսյանը «Չինարենի կամուրջ» համաշխարհային մրցույթի հայաստանյան չորս փուլերի արդյունքում ուսանողների շրջանում հաղթող ճանաչվեց՝ զբաղեցնելով առաջին հորիզոնականը: Ճանաչվելով եզրափակիչ մրցափուլի հաղթող՝ վերջինս պարգևատրվեց ոսկե մեդալով, թանկարժեք մրցանակով:

ԵՊՀ հրաձգարանում տեղի է ունեցել ՀՀ ուսանողական մարզական 25-րդ խաղերի՝ հրաձգության մրցաշարը, որտեղ ԵՊՀ հավաքականը ընդհանուր հաշվարկով գրավել է առաջին հորիզոնականը: Առաջնությանը մասնակցել են ՀՀ 13 բուհերի հավաքական թիմեր: Մրցաշարի արդյունքում ընդհանուր հաշվարկով ԵՊՀ հրաձգության հավաքականը գրավել է մրցանակային առաջին տեղը (249 միավոր):

2024 թ. ապրիլի 20-27-ը Չինաստանի Շենչժեն քաղաքում անցկացվել է քիմիայի 58-րդ մենդելևյան միջազգային օլիմպիադան, որին մասնակից հայ աշակերտները արժանացել են արծաթե ու բրոնզե մեդալների: Թիմի մարզիչները ԵՊՀ ուսանողներն ու դասախոսներն են:

Արդեն 6 տարի է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի թիմերը մասնակցում են «Վիլլեմ Ս. Վիս միջազգային առևտրային արբիտրաժ» դատախաղ մրցույթին՝

դառնալով դատախաղի կայուն ու սպասելի մասնակիցներից: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի թիմը մասնակցել է 2024 թ. փետրվարի 14-18-ը Թբիլիսիում անցկացված դատախաղ-մրցույթին, ճանաչվել հաղթող՝ զբաղեցնելով առաջին հորիզոնականը:

Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպությունը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, հայտարարել է, որ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում գործող Ցեղասպանության և այլ զանգվածային ոճրագործությունների կանխարգելման և կրթության ամբիոնը մինչև 2028 թվականը շարունակելու է գործել կազմակերպության հովանու ներքո:

Սա նշանակում է, որ ԵՊՀ ՀՀԻ ցեղասպանության և այլ զանգվածային ոճրագործությունների կանխարգելման և կրթության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնը շարունակելու է խթանել ցեղասպանագիտական կրթությունը ֆորմալ և ոչ ֆորմալ մակարդակներում, հասարակության շրջանում բարձրացնել ցեղասպանությունների և այլ զանգվածային հանցագործությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը տարբեր միջոցառումների, տեղեկատվության արշավների, հրապարակումների, սեմինարների միջոցով, ինչպես նաև համագործակցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի այլ ամբիոնների և այլ կազմակերպությունների հետ՝ ոլորտին առնչվող տարբեր ծրագրեր իրականացնելու համար:

ԵՊՀ բիզնես ինկուբատորի, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի և «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի համատեղ նախաձեռնությամբ Երևանի պետական համալսարանում անցկացվել է սոցիալական ազդեցություն ունեցող ստարտափ գաղափարների ընտրություն: Ներկայացված 17 խմբերից ընտրվել են լավագույն 6-ը, որոնք առաջիկա ամիսներին կյանքի կկոչեն իրենց ստարտափ գաղափարները:

ԵՊՀ բիզնես ինկուբատորի նախաձեռնությամբ՝ ընտրված 6 թիմերի համար մեկնարկել են «Առաջնորդություն և ինովացիա», «Շուկայի վերլուծություններ», «Սոցիալական ձեռներեցություն» թեմաներով դասախոսություններ՝ ԵՊՀ և այլ մասնագետների մասնակցությամբ: Հետագա դասախոսությունների թեմաները կառնչվեն մարքեթինգին, նախագծերի կառավարմանը, ծրագրերի ղեկավարմանը և այլն: Դասընթացի նպատակն է ինկուբացիայի շրջանակում սկսնակ կազմակերպություններին աջակցել գաղափարի մակարդակից ֆինանսավորման պատրաստ մակարդակի հասնելուն:

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ բարեգործական մեծ ներդրումների, հասարակական, հայրենասիրական բեղուն գործունեության ու

ԵՊՀ-ի հետ երկարամյա ակտիվ համագործակցության համար հայ բարերար, գործարար, «Իզմիրլյան» հիմնադրամի նախագահ Սարգիս Տիգրանի Իզմիրլյանին:

«Իզմիրլյան» հիմնադրամի շնորհիվ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանն առաջիկայում կարդիականացվի՝ ապահովելով մեր ուսանողների ուսուցման ու նրանց ակադեմիական նպատակների իրագործման համար անհրաժեշտ միջավայր՝ ոգեշնչելով մեզ ու գալիք սերունդներին:

ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում է շնորհվել նաև «Աբդուլազիզ Սաուդ ալ-Բաբտեյն» մշակութային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Աբդուլազիզ Սաուդ ալ-Բաբտեյնին, որի հավաստագիրը նրան փոխանցելու պատիվ ունեցանք հիմնադրամի հրավերով Քուվեյթ կատարած աշխատանքային այցի շրջանակում: Ցավոք, քուվեյթցի հայտնի բանաստեղծ, բարերար, Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտոր Աբդուլազիզ Սաուդ ալ-Բաբտեյն հեռացավ կյանքից:

Երևանի պետական համալսարանը 2018 թվականից համագործակցում է «Աբդուլազիզ Սաուդ ալ-Բաբտեյն» մշակութային հիմնադրամի հետ և հիմնադրամի հովանավորությամբ արաբերենի ու արաբական մշակույթի տարածմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր է իրականացրել:

«ԵՊՀ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

«Երևանի պետական համալսարանի բարեկամներ» հիմնադրամը ոչ առևտրային նախաձեռնություն է, որը հիմնադրվել է ԵՊՀ շրջանավարտների և բարեկամների կողմից՝ կենտրոնացնելու այն ամերիկահայերի ռեսուրսները, որոնք հավատում են, որ Երևանի պետական համալսարանը առանցքային դերակատարում ունի Հայաստանի զարգացման գործում:

Մենք համախմբում ենք տարբեր ոլորտներում գործունեություն ծավալած ամերիկահայ մասնագետներին՝ աջակցելու Երևանի պետական համալսարանում իրականացվող կրթական, հետազոտական և ենթակառուցվածքային ծրագրերին: Մեր ջանքերն ուղղված են ուսումնական և հետազոտական գործընթացների ընդլայնմանը, ինչպես նաև ԵՊՀ-ի և ԱՄՆ-ում տեղակայված գործընկեր հաստատությունների միջև գործակցության խթանմանը: Ավելին՝ մենք աջակցում ենք ԵՊՀ-ին՝ ԱՄՆ-ում և դրա սահմաններից դուրս գտնվող Հայկական սփյուռքին կրթական և հետազոտական ծառայություններ մատուցելու գործում:

ԵՊՀ շրջանավարտները՝ որպես լավագույն կրթություն ստացած նվիրյալներ, կարևոր դեր ունեն երկրի զարգացման գործում: Ուստի, Երևանի պետական համալսարանի արդյունավետ և կայուն առաջընթացի ապահովումը վճռորոշ է Հայաստանի ընդհանուր զարգացման համար:

Հիմնադրամի աշխատանքային հիմնական ուղղություններն են՝

- ԵՊՀ-ի և նրա գործունեության վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացում ԱՄՆ-ում գործող կրթական, հետազոտական և Սփյուռքի կազմակերպություններում,
- աջակցություն՝ ուղղված ԱՄՆ-ում գործող կազմակերպությունների հետ ցանցային և գործընկերային հարաբերությունների հաստատմանը,
- ԵՊՀ-ի առաջարկած կրթական, հետազոտական և ենթակառուցվածքային ծրագրի իրականացման նպատակով դրամահավաքների կազմակերպում և անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի ստեղծում:

Սույն թվականի հուլիսի 30-ին Հյուսիսային Ամերիկայի հայոց արևմտյան թեմի նստավայրում տեղի է ունեցել հիմնադրամի մեկնարկի պաշտոնական արարողությունը: Շուրջ 100 հրավիրյալներ, այդ թվում՝ թեմական բարերարներ, նվիրատուներ և Երևանի պետական համալսարանի շրջանավարտներ ներկա են եղել Արամայիս և Նաթելլա Պարոնյանների հովանավորությամբ կազմակերպված դրամահավաք-երեկոյին: Դրամահավաքի ընթացքում հավաքվել է ավելի քան 205,000 ԱՄՆ դոլար:

ՎԵՐՋԱԲԱՆ

2023-2024 ուստարվա ընթացքում իրականացված գործողությունների ամփոփման հիման վրա կարելի է եզրակացնել, որ համալսարանում իրականացվում են կրթության, գիտահետազոտական գործունեության, ենթակառուցվածքների և միջավայրի բարելավման համակարգային ծրագրեր ու գործողություններ, որոնք հանգեցնելու են ԵՊՀ արդյունավետության խորքային լավարկմանը:

2025 թվականին ԵՊՀ-ն մոտենում է համապարփակ ինքնահայեցման արդյունքներով, որոնք փորձել է արձանագրել համալսարանի նոր՝ 2025-2030 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում, որն իր հերթին վերջին տարիներին իրականացրած գործողությունների համակարգմանը և նոր հեռանկարներ սահմանելուն ուղղված ջանք է:

ԵՊՀ-ն ուստարվա ընթացքում իր գործունեության բոլոր ուղղություններով կարողացել է հասնել նշանակալի հաջողությունների և արձանագրել տեսանելի արդյունքներ, որոնց վերլուծությունը հնարավորություն է տալիս շարունակելու ընթանալ վերափոխման և համակարգային բարեփոխումների ճանապարհով:

Հաշվետու և նախորդ տարիների ընթացքում իրականացված գործողությունների արդյունքում ԵՊՀ-ն դարձել է ավելի հարմարավետ ու հասանելի կրթական և հետազոտական գործունեության իրականացման համար ինչպես բովանդակային ու մեթոդաբանական, այնպես էլ միջավայրային տեսանկյունից:

Համալսարանականներն իրենց գործունեության կազմակերպման համար ստացել են լրացուցիչ ֆինանսական, հաղորդակցական, տեխնիկական ու մեթոդաբանական հնարավորություններ, ինչը սկզբունքային է երկարաժամկետ արդյունքի ակնկալիքի համատեքստում: